Azg
Ազգ
15 ՅՈՒՆՈՒԱՐ 2008 ԵՐԵՔՇԱԲԹԻ 6 (3900)

Կկնվի՞ արդյոք բանավոր համաձայնագիր

Ըստ «Նովոստի-Ազերբայջանի», ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ակնկալում են, որ մինչեւ փետրվարին նախատեսվող Հայաստանի նախագահական ընտրությունները բանավոր համաձայնություն կկնվի Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիեւի միջեւ: Այս մասին հայտարարել է ՄԽ-ի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան: Իր հերթին, ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բերնար Ֆասիեն նշել է, որ ՄԽ-ի համանախագահների ղարաբաղյան հակամարտության կարգավորման առաջարկները, որ հակամարտության կողմերին են ներկայացվել Մադրիդում, «դրական են նրանց երկրների համար»: Ընդ որում, նա ընդգծել է, որ «հակամարտության ոչ մի կողմ չի կարող սպասել ամբողջությամբ այն ամենը, ինչ նա է ուզում»: Բերնար Ֆասիեն նաեւ ասել է, որ հունվարի 16-ին ծրագրված է հրադադարի ռահիկանման մոնիտորինգ անցկացնել կողմերի զինված ուժերի շփման գծում, որին կմասնակցեն եւ ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահները: Այցի ավարտից հետո համանախագահները երեկ ուշ երեկոյան ժամանեցին Երեւան:

Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան. անհրաժեշտությո՞ւն, թե ավելորդ ֆորմալացման փորձ

Միջազգային գիտաժողով Երեւանում

Ա. ՏԱՐՈՒՆՅԱՆ

Երեւանում երեկ մեկնարկած «Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան. միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հեռանկարներ» միջազգային երկօրյա գիտաժողովի կազմակերպիչը Հայկական միջազգային հետազոտական հետազոտությունների խումբն (AIPRG) է՝ Շվեդիայի շրջանավարտների հայաստանյան միության հետ համատեղ եւ ԵԱՀԿ, ՆԱՏՕ, Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ու ԵՊՀ շրջանավարտների միության հովանավորությամբ:

Գիտաժողովին մասնակցում են հաղարական-հասարակական գործիչներ, վերլուծաբաններ, ՁԼՄ ներկայացուցիչներ մի շարք նախկին խորհրդային երկրներից, նաեւ Բուլղարիայից, Ռումինիայից, Հունաստանից, Թուրքիայից, Սլովենիայից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Պորտուգալիայից եւ ԱՄՆ-ից: «Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան» հասկացությունը վերաբերում է Սեւ ծովի ափամերձ ժողովուրդներին, Մոլդովային, Հունաստանին եւ Հարավային Կովկասի երկրներին:

AIPRG-ի գործադիր տնօրեն **Տիգրան Մկրտչյանի** խոսքերով, գիտաժողովի նպատակն է խթանել ընդլայնված սեւծովյան հասկացության ենթակայությունները, որոնել հայաստանի դերն այդ տարածաշրջանում եւ խոսել անվտանգության խնդիրներից:

Տես էջ 2

Ստենաթեսը՝ կրկնակի հերոս

Նշանավոր բեռնախույզ եւ խորհրդանական Արթուր Չիլինգարովին նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Ռուսաստանի հերոս հռչակելու լուրը մոսկվացի հայերն ընդունեցին մեծ գոհունակությամբ, եթե չասենք՝ հպարտությամբ: Չիլինգարովն այս երկրի այն ֆիզ բարձրաստիճան ու ճանաչված հաղթագծեներից է, որը ոչ միայն հրապարակայնորեն ընդունում է իր հայկական ծագումը, այլեւ բազում թելերով կապված է եւ Հայաստանի, եւ Ռուսաստանի հայության հետ:

Հազիվ թե իմաստ ունի վերադասելու անցյալ տարի նոր ղեկավարած արկտիկական խորջրյա գիտարշավի մասին, հանգի այդ կապակցությամբ հրապարակեցին բազում նյութեր: Ելնելով երթի բազմանշանակությունից, մոսկովյան մամուլում նույնիսկ բանավեճ ծավալվեց՝ դա գիտական գործողություն էր, թե՞ քաղաքական, հանգի Ռուսաստանի դրոշի հայտնվելն Արկտիկայի մինչ այդ անհասանելի խորքերում այդ տեսությանը շանս է տալիս հավակնելու բնական պաշարներով ու հատկապես նավթով գերասաս աբխարհամասի հարստություններին: Իսկ թերթերից մեկը նույնիսկ անհրաժեշտ սոսնձել էր, թե գիտարշավի գլխավոր նվաճումը եղավ այն, որ նրա ղեկավարին հաջողվեց խորջրյա հատակին թողնել հայոց դրոշ՝«Այստեղ եղել է Արթուրը»...

Ըստ երեւույթին Չիլինգարովը դառնում է այն միակ հայը, որը երկու երկրի հերոս է, որոնցից մեկն արդեն գոյություն չունի: Տակավին 1986-ին նա Անտարկտիդայի սառույցների գերեվարումից փրկեց խորհրդային «Միխայիլ Սոմով» գիտարշավանավը:

Արթուր Չիլինգարովին առաջինը շնորհավորողների մեջ էր հայ եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազան Ներսիսյանը: Այլ կերպ չէր էլ կարող լինել. Լենինգրադում ծնված-մեծացած, երկրագնդի հակադիր բեւեռներում կոփված, ոսկե մորից երկունք առած հայազգի կրկնակի հերոսն արդեն տեսական ժամանակ տեղի թեմական խորհրդի ատենադեսն է եւ ոչ միայն չինովնիկի իր ախթասասենյակի բարձունքներից, այլեւ հայկական եկեղեցի կատարած իր բազում այցելություններով օգնության ձեռք է մեկնում մեր հոգեւոր ներկայացուցչության կլանում առաջացող զանազան «վարչական» հարցերի լուծմանը:

«Եթե Հայաստանն էլ նման շնորհի հերոսի կոչում, բազմանշանակ ժպիտով ասում է Եզրաս սրբազանը, ապա մեր անխոնջ ատենադեսը, դառնալով երեք երկրի հերոս, լիիրավ կհաստատվի ախթարհի մեծագույն հայերի ցուցակում»:

Թեեւ արդեն հաստատվել է: Համենայն դեպս, «մեր մեծագոր հայրենակցին» ամենայն բավականությամբ շնորհավորել է նաեւ Հայաստանի վարչապետը: Ի դեպ, վերոհայտնյալ գաղափարին հաստատ դեմ չի լինի Ռուսաստանի հայերի միությունը, որտեղ «լավ» գիտեն իրենց համախոհին...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Աբել Աղանբեկյանը պատրաստում է զեկույց

Համաշխարհային ճանաչում ունեցող սնտեսագետ, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աբել Աղանբեկյանը տասնօրյա այցով ժամանել է Հայաստան: Երեկ ակադեմիկոսը ԳԱԱ նախագահությունում հանդիպել է հայ սնտեսագետների, ոլորտաբանների եվ հաղաքագետների հետ: Աղանբեկյանը խոսել է ինովացիոն հաղաքականության մասին, նշելով, որ անհրաժեշտ է մեծացնել ինովացիոն տեխնոլոգիաների չափաբաժինը համախառն ներքին արդյունքում: Պատասխանելով հանդիպման մասնակիցների հարցերին՝ Ա. Աղանբեկյանը հայտնել է, որ պետք է հանդիպի հայ գործարարների հետ, որպեսզի ինչպես գիտաշխատանքային ոլորտներում կարելի է նեղոնել:

ՀԱՍԿԻՐՔ

Նախագահը վիրահատվել է

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նախորդ շաբաթ Փարիզի ակնաբուժական կենտրոններից մեկում հետազոտվելուց հետո ենթարկվել է ակնաբուժական վիրահատության՝ աչքի լորձաթաղանթի թեւավոր փոքի հեռացման նպատակով: Նախագահի մամլո քարտուղար **Վիկտոր Սողոմոնյանը** «Մեդիամաքս» գործակալությանն այսօր տեղեկացրել է, որ «նշված հիվանդությունը տեսողության համար խնդիրներ չի առաջացնում»: «Նախագահը պատմինվել է, շաբաթ երեկոյան վերադարձել է Երեւան եւ շարունակում է աշխատել՝ առանց օրակարգի փոփոխությունների», նշել է Վիկտոր Սողոմոնյանը: Հաղորդվում է, որ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ավագ որդու՝ Սեդրակ Քոչարյանի ընտանիքում ծնվել է երեխա: Նորածնին անվանել են Անի:

Մերժ Սարգսյանը ունի իր նախընտրական ծրագիրը

Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիրը տեղադրվել է նրա նախընտրական կայքէջում: Ծրագրում անդրադարձ կա ղարաբաղյան հիմնախնդրին: Մասնավորապես ըստ ծրագրի, ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման հարցը խարսխվելու է հետեւյալ սկզբունքների վրա՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը եւ դրա իրագործման համար պայմանների ստեղծումը, ԼՂՀ բնակչության եւ սահմանների անվտանգությունը, ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի միջեւ ընդհանուր սահմանի առկայությունը: Նշվում է, որ Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղվելու է երկրի ու տարածաշրջանի կայունության ապահովմանը եւ հակասությունների հաղթահարմանը:

Վրաց ընդդիմությունը կոչ է անում. «Ամերիկա՛, բացիր աչքերդ»

80 հազարանոց ցույց հին Նոր տարուն

Այսօր՝ թբիլիսյան ժամանակով կիսգիշեր, Վրաստանի հանրային հեռուստատեսության շենքի առաջ: Եվ եթե շարունակվի այն ընթացքը, որով Վրաստանի հաղաքացիները Վարդերի հեղափոխության հրադարակից Ազատության (որ նախկինում Երեւանյան էր) հրադարակ եռում «Եվրոյուզի» տվյալներով, կազմում էին շուրջ 80 հազար, ապա կարելի է ենթադրել, որ հանրահավաքային հիմնական պահանջ ներկայացված երկրորդ փուլի անցկացումը կարող է դիտարկվել որպես ընտրազանգվածի զգալի հատվածի բողոք:

Ամեն դեպքում, հանրահավաքային բողոքի տարբերակն ընտրած ընդդիմությունն, ի հակադրություն ցույցի մասնակիցների՝ հանրահավաքը տեւական եւ անընդհատ դարձնելու ցանկություն, հայտարարել է, որ ամեն ինչ պետք է անցկացնել խաղաղ ու հանգիստ պայմաններում: Ընդդիմության ներկայացուցիչները պետք է ունենան տեսակցություն հետեւանքով Նոյեմբերի 2-ին մեկնարկած հանրահավաքի 6-րդ օրը իշխանության բռնություններով հավաքըցրելու իրադարձությունների դեմ ուղղված փորձը:

Որքան էլ հետաքրքրական է, ցուցարարների հայտարարություններն ուղղված չեն եղել միայն վրաց իշխանության: Հունվարի 13-ի բազմահազարանոց ցույցում ցուցադրատարների վրա, ինչպես հաղորդում է «Նովոստի-Գրուզիա» գործակալությունը, գրված է եղել. «Ամերիկա՛, բացիր աչքերդ», «ԱՄՆ-ն աջակցեց դիկտատորային», «ԵԱՀԿ-ն աջակցեց ընտրությունների կեղծմանը» եւ այլն:

Ինչեւէ, Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի արդեն հրապարակած տվյալներով, ձայների 53,47 տոկոսով երկրի նախագահ է ընտրվել Միխեիլ Սաակաշվիլին, իսկ ընդդիմության միասնական թեկնածուն ստացել է 25,67 տոկոս:

Ա. Հ.

ԳԵՐԵԼԱՏԵՍԱԿԱՆ

Ցուրտ եղանակը կդահիճանվի

Հայդրոմետեորոլոգիական ծառայության գլխավոր տնօրեն Գագիկ Սուրենյանցը տեղեկացրեց, որ «վերջին հինգ օրերին հանրապետությունում դիտվել է բավականին ցածր ջերմային ռեժիմ: Առաջիկա դաշտում հունվարի 14-ին գրանցվել է մինչեւ 26 աստիճան ցուրտ: Երեւանի ցածրադիր վայրերում հունվարի 14-ի գիշերը դիտվել է 26 աստիճան ցուրտ, բարձրադիրում՝ 17 աստիճան: Հունվարի 15-ից սիբիրական անտիցիկլոնի ազդեցությունը հանրապետության վրա կթուլանա, որով պայմանավորված հյուսիս-արեւելյան հոսանքները մի փոքր կփոխարինվեն հարավ-արեւելյան հոսանքներով եւ հանրապետություն կներթափանցեն 2-3 աստիճան ավելի բարձր ջերմաստիճան ունեցող տաք հոսանքներ, որով էլ ջերմաստիճանը կբարձրանա 2-3 աստիճանով: Սակայն Արարատյան դաշտում տաք օդի ներխուժումը էական ազդեցություն չի

թողնի եւ ջերմաստիճանը կբարձրանա ընդամենը 2 աստիճանով: Հունվարի 15-20-ը հանրապետությունում կդիտվի առանց տեղումների եղանակ: Արարատյան դաշտում օրի ջերմաստիճանը՝ 21-22 աստիճան ցուրտ գիշերային ժամերին, ցերեկը՝ 8-10: Երեւանում գիշերը սպասվում է 21-22, ցերեկը՝ 7-9 աստիճան ցուրտ:

ՄԱՐԻԱՆՆԱ ՄԱՐԱՐՅԱՆ

Ղարաբաղը՝ պատերազմի արդյո՞ւնք

Ինչ էլ ասենք՝ տարբեր են հայկական եւ ադրբեջանական իրականությունները

Ադրբեջանական «3-րդ տեսակետ» տեղեկատվական-վերլուծական գործակալության տնօրեն Ռաուֆ Ռաջափովը երբեմն չի եղել Լեռնային Ղարաբաղում, բայց վերլուծություններ անում է հիմնվելով դարաբաղյան հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումների հիման վրա, հաճախակի լինում է Հայաստանում, ինչը վերլուծաքանի համար շատ կարեւոր է, հանդիպում է վերլուծաքաններ, փորձագետների հետ: Ռաջափովը դարաբաղյան խնդրի եւ Կոսովոյի նախադեպի, հակամարտության լուծման, ըստ իրեն, երեք ուժեղ հետազոտությունների հեղինակ է:

«Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան. միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հեռանկարներ» գիտաժողովի մասնակից Ռաջափովը լրատվամիջոցներին ներկայացնելով իր մոտեցումը՝ նշեց, որ տարբերակել է պետք հակամարտության կարգավորումն ու լուծումը: «Կարգավորումը որեւէ տեսակի համաձայնագրի ստորագրման դեպքում չի պարտավորեցնում կասարում: Փոխզիջումների որոնումից, դիմորոշումային առեւտրից (թե հայկական կողմը ընդունում է պատերազմի արդյունքները, ադրբեջանական կողմը՝ արտաքին ուժի կիրառման դիմորոշմամբ), պետք է անցնել տարածաշրջանային շահերի ու հարաբերությունների»:

«Ազգի» հարցին, թե ասվածն ինչպես կարելի է տեղավորել ալիեւյան ռազմատենչ հայտարարությունների, նաեւ հակամարտության կարգավորումն այլ հարթության կամ այլ այսպիսներ տեղափոխելու ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) նախաձեռնությունների համատեքստում, Ռաջափովը պատասխանեց. «Պարոն Իլհամ Ալիեւը բազմիցս արտահայտվել է Ադրբեջանի՝ որպիսի գործընթացին հետեւելու մասին: Այդ գործընթացը մեկ տարի չէ, որ ընթանում է եւ մեր նախագահն այս տարի արդեն հայտարարել է, որ չնայած Հայաստանում փետրվարին, իսկ Ադրբեջանում հոկտեմբերին անցկացվելիք նախագահական ընտրություններին՝ Ադրբեջանը 2008-ից սպասում է որոշակի առաջխաղացում»:

Ինչ վերաբերում է ՎՈՒԱՄ-ին, ապա, ըստ ադրբեջանցի վերլուծաքանի, կազմակերպության նախաձեռնություններից առաջինը խաղաղապահ ծառայողական զորախումբ ստեղծելուն է վերաբերում եւ դարաբաղյան, մերձդնեստրյան, հարավօսական եւ աբխազական հակամարտությունների դիտարկումն է: Ռաջափովի կարծիքով, ՄԱԿ-ի շրջանակներում հարցի լուծմանը կողմնակից պետք է լինի նաեւ Հայաստանը, հատկապես որ «մենք հիմա գտնվում ենք այն կետում, որտեղ էինք մի քանի տարի առաջ»:

«Ազգի» հարցին, թե արդյոք դա նշանակում է, որ դրական գործընթացում առաջընթաց չկա, Ռաջափովը պարզաբանեց, թե կա թեկուզ այնքանով, որ Ադրբեջանը պատրաստ է Լեռնային Ղարաբաղին Թաթարստանի կարգավիճակ տալուն: «Ղարաբաղը Թաթարստան չէ», «Ազգի» դիտարկմանը վերլուծաքանը համաձայնեց, նշելով, որ դա կարող է որեւէ մեկի համար անընդունելի լինել, բայց Ադրբեջանն ու Հայաստանը որոշակի ոչ մի բան չեն առաջարկել:

«Իմքնորոշումը կարգավիճակ չէ, թեստություն ստեղծելու ձեւ, դա նախորդող է հանրաքվեին, որը կարող է անցկացվել ինչպես Ղարաբաղի ադրբեջանցիների, այնպես էլ հայերի մասնակցությամբ, այլ ոչ թե ողջ Ադրբեջանում», գտնում է ադրբեջանցի վերլուծաքանը, հավելելով, որ ադրբեջանցիների եւ հայերի համար պետք է եռախավորվի անվտանգությունը:

Ամեն դեպքում, Ռաջափովի համոզմամբ, Հայաստանի դիմորոշումը պատերազմի արդյունքի ընդունումն է, իսկ «պատերազմի արդյունքը Ղարաբաղն է»: Ռաջափովը հակամարտության հանգուցալուծումը տեսնում է երկու կողմերի՝ անիրականանալի, անընդունելի պայմաններից հրաժարվելու մեջ: Լուծումը մեկ մակարդակում կարող է լինել, այլեւս ոչ մի պատերազմ:

Ա. Հ.

Պիտեր Սեմնեբի. «Լեռնային Ղարաբաղին վերաբերող հատուկ ջանքերը պետք է առաջ գնան՝ առանց չափից ավելի ուշադրություն դարձնելու Կոսովոյի հարցին»

Սպասվող նախագահական ընտրությունների եւ դարաբաղյան հակամարտության կարգավորման կողմերի դիտորոշումների ֆոնին Հարավային Կովկասում եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին գտնում է, որ երբեմն պետք չէ հապահապվել: «Ես դեռ հույս ունեմ, որ դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ առաջընթաց կլինի: Մենք ներկա դրությամբ առաջ գնացող դիվանագիտություն ունենք, եւ ես հույս ունեմ, որ նախագահական ընտրությունները հարցը ընդգծելու հնարավորություն կլինեն եւ ոչ թե խոչընդոտ», երեկ երեւանում հայտարարեց «Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան. միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հեռանկարներ» գիտաժողովին մասնակցող Պիտեր Սեմնեբին:

Ինչ վերաբերում է Կոսովո-Լեռնային Ղարաբաղ հնարավոր զուգահեռների անցկացմանը, ապա եվրոմիության հատուկ ներկայացուցչի խոսքերով, «Կոսովոյի հարցը շատ առանձնահատուկ է: Ես շատ լավ հասկանում եմ, որ կախված, թե որ կողմում ես դու, Կոսովոյի հարցը կառաջացնի սպասումներ եւ վախ, բայց ես կնախազգուշացնեի այդպես չվարվել, քանի որ ավելի շատ բան է տարբերակում հակամարտությունները իրարից, քան կան հատուկ հանգամանքներ, որ միավորում են դրանք: Լեռնային Ղարաբաղին վերաբերող հատուկ ջանքերը պետք է առաջ գնան՝ առանց չափից ավելի ուշադրություն դարձնելու Կոսովոյի հարցին»:

Անդրադառնալով սպասվող նախագահական ընտրություններին՝ Սեմնեբին նշեց. «Եվրոմիությունը ակնկալում է, որ դրանք կանցնեն միջազգային ստանդարտներին համապատասխան»: «Ազգի» հարցին, թե նո՞ւյն կերպ, ինչպես Վրաստանում, Սեմնեբին չպատասխանեց՝ հայտարարելով, թե այդ ակնկալիքները, ընտրությունների անցկացման առումով, եւ ստանդարտները նույնն են:

Իսկ ընդհանուր առմամբ, նախընտրական վիճակն, ըստ Սեմնեբի, ընթանում է նորմալ, կան շատ թեկնածուներ, պլուրալիստական միջավայր է նաեւ զանգվածների առումով, որն, ընդ որում, վերաբերում է նաեւ ՁԼՄ-ներում իրավիճակի արացոլմանը: Ամեն դեպքում, վերջնականը կլինի ժողովրդավարական հասատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի դիտորդական առաքելության գնահատականը:

ԱՆՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան ...

1-ին էջից

Ողջույնի խոսքով հանդես եկած Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբին խոսքերով, սեւծովյան տարածաշրջանում հանգամանքությունը առաջնահերթություն է ԵՄ համար, հատկապես որ Հարավային Կովկասը մոտեցել է ԵՄ սահմաններին՝ Բուլղարիայի եւ Ռումինիայի եվրոընտանիք մուտից հետո եւ ԵՄ-տարածաշրջանի երկրներ հանգամանքության հիմնական մեխանիզմն էլ այդ երկրներում իրագործվող եվրոպական նոր հարեւանության ռազմավարությունն է:

Միեւնույն ժամանակ, Սեւ ծովի ավազանի երկրները կարեւորվում են նաեւ տրանսպորտային եւ էներգետիկ հաղորդակցության ու ճանապարհների բազմազանությամբ՝ կենտրոնական Ասիայից եւ Միջին Արեւելքից Եվրոպա գծի կտրվածքով: Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանն էլ, ըստ Սեմնեբիի, իրենց յուրահատուկ դերով ու շահերով տարածաշրջանը դարձնում են հանդիպման վայր ԵՄ շատ կարեւոր գործընկերների եւ միջազգային ուժերի համար:

Սեմնեբին գտնում է, որ չլուծված հակամարտությունները մեր տարածաշրջանում խոչընդոտում են կովկասում կայունության հաստատմանը: Ու չնայած նեղեսական անպտղության աճին՝ տարածաշրջանն, ըստ եմ ներկայացուցչի, դեռ ասացվում է խնդիրների ու հակամարտությունների հեռ: Բացի այդ, փակ սահմանները Ռուսաստանի ու Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ թույլ չեն տալիս օգտագործել տարածաշրջանի ներուժը:

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Մարկ Բոյանիչի խոսքերով, ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ն, ԱՊՀ-ն կարող են աղահովել սեւծովյան տարածաշրջանի երկրների, մասնավորապես՝ Հարավային Կովկասի կայուն զարգացումը: Ըստ Բոյանիչի, լայն իմաստով, մեր տարածաշրջանը բնորոշվում է ոչ միայն հակամարտություններով, այլեւ աղբերների միգրացիայով եւ թմրանյութերի շրջանառությամբ, ընդ որում, հակամարտություններն էլ հենց հիմնական են կազմակերպված հանցավորության ձեւավորման համար:

Այսօր գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն՝ ընդլայնված սեւծովյան տարածաշրջանի համար ինստիտուցիոնալ եւ գլոբալ մարտահրավերների, տարածաշրջանային դերակատարների տեսակետների, հնարավոր ռազմավարության հարցերի քննարկմամբ: Եվ եթե երեկ «Գոլդեն փալաս» հյուրանոցում գիտաժողովի ընթացքում դարաբաղյան հակամարտությանն անդրադարձավ Վլադիմիր Կազիմիրովը՝ հակամարտության չեզոքացումը որպես սեւծովյան տարածաշրջանային ապահովության եւ համագործակցության համար անհրաժեշտ պայման ներկայացնելով, ապա այսօր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Մեթյու Բոյդան կներկայացնի ընդլայնված սեւծովյան տարածաշրջանի կտրվածքով ԱՄՆ ռազմավարական տեսակետը: Ի դեմ, միեւնույն ժամանակ դարաբաղյան հակամարտության հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբում ամերիկացի համանախագահ Բոյդան, ֆրանսիացի եւ ռուս համանախագահներ հեռ արդեն երեկ Երեւանում էր՝ Բաքվում հանդիպումներից հետո:

2008-ը, ըստ Կազիմիրովի, պատերազմի անթույլատրելիության ապահովման տարի

1992-96 թթ. դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջնորդական առաքելության ռուսաստանյան ներկայացուցիչ, Ռուս դիվանագետների միության փոխնախագահ Վլադիմիր Կազիմիրովը 2008 թվականին դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում առաջընթացի հիմքեր չի տեսնում:

«2008 թվականին ինչ-որ բանի հույս ունենալու համար պետք է շատ համարձակ մարդ լինել: Շատերն էին ասում, թե 2006-ը «հնարավորությունների պատուհան» էր: Ես կասեի, որ հիմա պետք է մտածել, թե ինչպես օգտագործել 2008 թվականի «հնարավորությունների պատուհանը»՝ նկատի ունենալով նախագահական ընտրությունները Հայաստանում, Ադրբեջանում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, գումարած Կոսովոյի ֆենոմենը եւ այլն», «Ազգի» հարցին ի պատասխան նշեց Կազիմիրովը Երեւանում անցկացվող «Ընդլայնված սեւծովյան տարածաշրջան. միջազգային եւ տարածաշրջանային անվտանգության հեռանկարներ» գիտաժողովի ընդմիջմանը:

Բացի այդ, ըստ Կազիմիրովի, ներկայումս բանակցային գործընթացը մտել է փակուղի: «Իհարկե, կողմերը, որքան ես գիտեմ եւ որքանով տեղեկությունների եմ տիրապետում, ինչ-որ հարցեր առաջ են տանում, բայց առանցքային, հիմնական հարցերը մնում են դժվար լուծելի: Ես ուրախ կլինեմ սխալվելու եւ առաջինը ուրախությունից պարկգամ, եթե 2008 թվականին որեւէ առաջխաղացում լինի, բայց դրա վրա հույս դնել դեռ չի կարելի: Ուրեմն հարց է մնում, թե ինչի համար օգտագործել այս տարին»:

Յուրաքանչյուր կողմ, ռուս դիվանագետի խոսքերով, ունի իր առաջնահերթությունները: «Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հայերի մոտ դա ԼՂ կարգավիճակի հարցն է, ադրբեջանցիների համար՝ ամենից առաջ օկուպացված տարածքներից զորքերի դուրսբերումն է ու փախստականների վերադարձը: Բայց մի՞թե այս առաջնահերթությունները նույնն են նաեւ միջազգային հանրության համար: Գուցե ես իմ բարձր եմ ասում միջազգային հանրություն անվանելով, բայց ամեն դեպքում միջազգային հանրությունը պետք է ամենից առաջ մտահոգ լինի նոր պատերազմի անթույլատրելիությամբ», համոզված է Կազիմիրովը:

«Ազգի» հարցին, թե որքանով է պատերազմը իրատեսական կամ մոտ ապագայի հարց, Կազիմիրովը պատասխանեց, որ այն իրատեսական չէ այսօր, բայց ունի որոշակի իրական ասպեկտներ: «Եվ որպեսզի չդառնա իրական, պետք է բաց չթողնել 2008 թվականը, գործել կանխարգելմամբ, այլ ոչ հետին թվով, ինչպես հաճախ գործում է ԵԱՀԿ Մինսկի խումբը»:

Կազիմիրովն իր ասածի օրինակ է բերում համանախագահների մարդիդյան հանդիպումների արդյունքը, որտեղ ընդգրկվեց մեկ արտահայտություն՝ հակամարտության լուծման ռազմական ճանապարհը հավանական համարող հայտարարությունների անմիջական դադարեցման մասին: «Դա ծիծաղելի է, բայց պետք է արվեր մի երեք, եթե ոչ ավելի տարիներ առաջ, բայց է թողնվել ժամանակը, անպատասխանատվությունը արժատներ է ձգել, ամեն խայծերակում խոսվում է ռազմական հավանական լուծման մասին»:

Բացի այդ, դարաբաղյան հակամարտությունը մյուս՝ աբխազական, հարավօսական եւ մերձդնեստրյան հարցերից տարբեր է նաեւ նրանով, որ ունի ողբերգական նախապատմություն: «Եվ խնդիրն այն չէ, որ որեւէ կերպ լուծվի ներկա հակամարտությունը, այլ վերջ դրվի արյունոտ հաշվեհարդարներին հայերի ու ադրբեջանցիների միջեւ: Սա շատ ավելի բարդ խնդիր է»: «Բացի այդ, մյուս հակամարտություններից ոչ մեկում չկա ռազմական ռեանեշի այնպիսի ուժգին ձգտում, ինչպես դարաբաղյանում»:

ԱՆՏԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳ» ՕՐԱԳԵՐԻՑ
Հրատարակության մեջ է արդեն
Գիտաժողովներ եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԳԵՐԻ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅՈՒՐԻ ՍԵՏՐԱԿՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅՈՒՐԵՆՍ / հեռ. 529221
Հասարակական (կուլտուրա) / հեռ. 582960
Լուսանկարների սենյակ / հեռ. 581841
Գովազդ. ենթադրություն / հեռ. 582483
Հարցերով լրահաղորդումների / հեռ. 529353
Համակարգչային տարածք «Ազգ» թերթի
Թերթի նիստերի ամբողջական թե մասնակի արտատպումները տրամիր մասնակի միջոցով կամ ստորագրությամբ առանց խմբագրության գրավոր համաձայնության խախտ արգելվում են համաձայն ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիստերը չեն գրախոսում ու չեն վերադարձնում
Գ. տարով յուրաքանչյուր գրվագրային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատուություն չի կրում:
"AZG" / Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

2021-ին Հայաստանում աղքատությունը կլինի 6 տոկոս

Գոնե նման հավակնություն ունի ԱՀՈԾ-2 վերանայված նախագիծը

2003-ից հաստատված եւ իրականացվող Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՈԾ) 2005-2007-ի համար նախատեսված որոշ ցուցանիշներ հաղթահարել է, եւ ինչպես հավաստիացնում են ծրագիրն իրականացնողները, առաջացել է ծրագրի վերանայման անհրաժեշտություն: Երեկ «Կոնգրես» իյուրանոցում վերանայված ծրագրի ներկայումն էր, ինչը կկազմակերպվի նաեւ մարզերում: ԱՀՈԾ վերանայված ծրագիրը հավակնոտ է եւ, օրինակ, 2021-ի համար նախատեսում է, որ Հայաստանում աղքատության մակարդակը կլինի 6 տոկոս՝ 2006-ին արձանագրված 26,5-ի փոխարեն: Այս մասին ԱՀՈԾ-2 վերանայված ծրագրի ներկայման ժամանակ ասաց ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Սուրեն Կարայանը: Փոխնախարարի խոսքով, 2003-ին, երբ սկսվեց իրականացվել ԱՀՈԾ-ն, աղքատության մակարդակը մեր երկրում մոտ 56 տոկոս էր, որը փաստորեն 3 տարի անց կիսով չափ նվազել է:

Սա ահռելի կրճատում է, որի արդյունքը թերեւս հսկայական եւ զգալի պետք է լիներ բնակչության համար, բայց այդպես է: Ամեն առիթով բնակչության տարբեր խավերի հետ շփվելիս մեր տեսած իրականությունը բավական հեռու է ներկայացվածից, թեեւ անժխտելի են նաեւ աղքատության դրական տեղաշարժերը: Սակայն դա այն ահռելի դրական ցատկը չէ, ինչն արտահայտվում է ներկայացված ցուցանիշով: Եվ բացի այդ, եթե երեք տարում հնարավոր է եղել 56 տոկոս աղքատության շեմից հասնել 26,5 տոկոս շեմին, այդ դեպքում 6 տոկոսի հասնելու համար արդյոք շա՞տ չէ՞ մինչեւ 2021 թվականը: Ծրագիրն իրականացնողները սա մեկնաբանում են ծրագրին երկրի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ անունը տալով:

ԱՀՈԾ խորհրդատվության ղեկավար Հովհաննես Ազիզյանի խոսքով, 2021-ին ակնկալվելիք 6 տոկոս աղքատությունը այնպիսի լավ ցուցանիշ է, որն, ըստ էության, չի վտանգելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը: Ծրագրի վերանայված տարբերակում, ինչպես նշեց Ազիզյանը, ընդլայնված է մրցակցային դաշտի, գործարար միջավայրի բարելավման խնդիրը, որը ծրագրի առաջին տարբերակում այդպես խորությամբ տրված չէր: Ծրագրի երկրորդ ուղղությունը տարածքային անհամաչափությունների վերացումն է, որը վերջին տարիների մարտահրավերներից է եւ լուծում է պահանջում: Այսինքն՝ ծրագրով նախատեսվում է այնպիսի նախադրներ իրականացնել, որ երեւանի եւ մարզերի միջեւ սոցիալական մակարդակի այսօրվա սուր ընդգծվածությունը թուլանա: Հովհաննես Ազիզյանի խոսքով, նաեւ կդադարեցվեն առանձնահատուկ տարածքային ծրագրեր՝ մարզային անհամաչափությունները վերացնելու համար: Ամենաաղքատ մարզն այսօր Շիրակի մարզն է, որում թերեւս ամենաբատն է զգացվում այդպիսի ծրագրերի իրականացումը: ԱՀՈԾ-2-ով նախատեսվում է նաեւ ծայրահեղ աղքատության մակարդակի հաղթահարում, որը 2006-ին եղել է 4,1 տոկոս:

Ըստ ԱՀՈԾ վերանայված փաստաթղթի՝ ակնկալվում է, որ աղքատությունը պետք է կրճատվի, 2012-ին լինելով ոչ ավելի, քան 12 տոկոս, 2015-ին՝ ոչ ավելի, քան 9 տոկոս եւ վերջապես 2021-ին՝ 6 տոկոս: Իսկ ծայրահեղ աղքատության համար նախատեսվում է 2012-ին հասնել 2 տոկոսից ցածր ցուցանիշի՝ 2006-ի 4,1 տոկոսի փոխարեն:

Խոսելով ԱՀՈԾ վերանայված տարբերակի առանձնահատկությունների մասին՝ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը ասաց, որ նախագծում հաշվի են առնվել կենսրնական եւ արեւմտյան երկրների համադրելի ցուցանիշները: Նախարարն ընդգծեց, որ կառավարությունը ԱՀՈԾ-ն իրատես համարում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր:

Մի քանի օր առաջ «Ազգի» հետ հարցազրույցում ԱՀՈԾ-ի աշխատանքները համակարգող խմբի ղեկավար, ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Սուրեն Կարայանն ու ԱՀՈԾ խորհրդատվության ղեկավար Հովհաննես Ազիզյանը ներկայացրել էին աղքատության հաղթահարման համար առաջնահերթ խնդիրը: Ազիզյանի ներկայացմամբ, աղքատության հաղթահարման համար հիմնական միջոցը բնակչության իրական եկամուտների ավելացումն է, աշխատավարձերի բարձրացումը եւ իրական զբաղվածության ընդլայնումը. «Մինչեւ 2021-ը նախատեսում ենք մոտ 450 հազար լրացուցիչ աշխատատեղեր ստեղծել եւ ավելի բարձր աշխատավարձեր: Աղքատության կրճատման հիմնական միջոցը դա է: Երկրորդը սոցիալական խաղաղությունն է, այսինքն՝ բնակչությանն ապահովել այնպիսի թոշակներով եւ նպաստներով, այնպիսի նվազագույն աշխատավարձով, որ բնակչությունն իմնուրույն հաղթահարի աղքատությունը: Երրորդ ուղղությունը գործարար միջավայրի բարելավումն է, կառավարման համակարգի բարելավումը, որը զուգակցվում է գործարար միջավայրի բարելավման հետ»:

ԱՀՈԾ աշխատանքային խմբի համակարգող, փոխնախարար Սուրեն Կարայանը ասաց, որ ծրագրի թիրախը ոչ թե աղքատության կրճատումն է, այլ ընդհանրապես այդ երեւույթի հաղթահարումը. «Պետք է ոչ թե զանգվածային միջոցներով, աղքատներին գումարներ տրամադրելու միջոցներով հաղթահարել աղքատությունը, այլ ստեղծել երկրի այնպիսի զարգացում, որ աղքատների իրական եկամուտները աճեն եւ իրենք իրենցով դուրս գան աղքատությունից: Դրա համար էլ սա սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագիր է: Մենք հիմնական ասում ենք տնտեսական զարգացման վրա, այսինքն՝ կարողանանք ապահովել այնպիսի կայուն տնտեսական աճ, որն առավելագույն ազդեցությունը կունենա հենց բնակչության աղքատ շերտի վրա»:

ԳՈՌՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բարեգործական ցուցահանդես-վաճառք կարիքավոր երեխաների համար

«Ամեն մի մանուկ կանաչ տերեւ է հասարակության մեծ ծառի անդաստանում, այդ տերեւներից է կազմված մեծ ծառի ամրությունը: Մեր պարտն է օգնել այդ թույլ, ճկվող սաղարթներին, որպեսզի նրանք ամուր կանգնեն հայրենի հողում»: «Թույլ, ճկվող սաղարթ», ասելով «Հույսի տերեւ» ՀԿ-ն նկատի ունի սոցիալապես անապահով եւ ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաներին, որոնց համար հունվարի 27-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում նախատեսվում է անցկացնել բարեգործական ցուցահանդես-վաճառք: «Հույսի տերեւ»-ի շուրջը մենք ցանկանում ենք հավաքել Հայաստանի մանկատների ավելի քան հազար երեխաների, խուլ եւ համր, մարմնական արատներ ունեցող հարյուրավոր մանուկների, բացել նրանց ստեղծագործությունների ցուցահանդեսը (նկար, քանդակ, խճանկար, ասեղնագործություն, փայտագործություն, կավագործություն եւ այլն): Միջոցառումից սրտաշվող ամբողջ հասույթը կտրամադրվի երեխաներին: Բացի այդ, հասարակության այս խավի երեխաները հանդես կգան այցելուների առաջ համերգով: Նրանց հետ երգելու եւ պարելու են հայկական էստրադայի ճանաչված անուններ: «Հույսի տերեւ»-ը պատուհաս է դեռի մարդասիրություն», ասված է խմբագրություն ուղարկված ծանուցման մեջ:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՕՐՎԱԿԱՐԳ

Այսօր

- Ժամը 13.00-ին «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում տեղի կունենա Հայ կամավորականների համախմբման համակարգող խորհրդի ասուլիսը:
- Ժամը 12.00-ին «Փաստարկ» ակումբի հյուրը կլինի Միավորված կոմկուսի ղեկավար Յուրի Մանուկյանը:
- Ժամը 16.00-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի կունենա Քրիստոսի Սուրբ Ծննդյանը նվիրված հանդիսություն:

1996-ի ընտրությունների մանուկյանական համոզմունքն ու ԼՏՊ-ական ինքնախաբկանքը

Ակտիվ հաղթականությունից դուրս լինելն ու երկարատեւ լռությունը վերլուծությունների ու համադրումների համար գուցե եւ օգտագործվել են, սակայն ոչ մի կերպ ազդեցություն չեն ունեցել անցյալի վերագնահատման ու ազնիվ եզրակացություններ անելու տեսանկյունից ՀՀ առաջին նախագահ Լեւոն-Տեր Պետրոսյանի վրա: Այլապես նա արդեն որպես ՀՀ նախագահի թեկնածու հունվարի 11-ին հրավիրած ասուլիսում, ի պատասխան հնչեցված հարցի անդրադառնալով 1996 թվականի նախագահական ընտրություններին, հարկ չէր համարի ասելու, թե հաղթական այդ գործընթացից դժգոհելու իրավական հիմքեր չեն եղել ու չկան:

«Որ Վազգեն Մանուկյանը համոզված է եւ կարծում է՝ 96 թվականին ինքն ընտրվել է նախագահ, ես հարգում եմ նրա համոզմունքը եւ կարծիքը: Թող այդպես էլ համոզված մնա ու կարծի: Բայց հաղթականությունը կարծիք չէ, համոզմունք չէ: Քաղաքականությունն իրավական պրոցես է եւ կապված է պետության հետ», սա Տեր-Պետրոսյանի պատասխանի մի մասն է, որին ունկնդիր լինելուց հետո մնում է մտածել, որ նախագահի թեկնածուն վաղուց զերծ է մնացել հաղթականությանը որպես երեւույթ անդրադարձող ձեռնարկների ընթերցումից կամ, ասենք, վերընթերցումից եւ չի հիշում, որ այդ պետությունում կատարվածի ընտրող, թելադրողը բնավ էլ ժողովուրդը չէր, դաշնական կառույցներն էլ արդարադատությունից ավելի հեռու էին, քան այժմ: Ամեն դեպքում Լեւոն Տեր-Պետրոսյանն, առաջ գնալով իր պատասխանում, երախտագիտություն էր հայտնել Վազգեն Մանուկյանին՝ իր քվեներն ավելացնելու համար, նկատի ունենալով վերջինիս Սահմանադրական դատարան դիմելու արդյունքները. «Իմ մրցակիցը որեւէ առացույց չի կարողացել բերել, որ այդ ընտրությունները կեղծված են»:

Ասվածին երեկ, բնականաբար, պատասխան է տվել Վազգեն Մանուկյանի նախընտրական շտաբից, որում մասնավորապես ասվում է. «Միաթեսական համակարգ հաստատող սահմանադրությամբ ձեւավորված Սահմանադրական դատարանը չընդունեց, որ 1996 թվականի ընտրությունները կեղծվել են, ինչպես եւ չընդունեց հետագայում, որ կեղծվել են 2003 թվականի նախագահական եւ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունները:

Ինչ վերաբերում է 1996, 1998, 2003 թթ. կեղծված ընտրությունների արդյունքում նկարված տոկոսներին, որոնք վերագրվում են Վազգեն Մանուկյանին, ապա Լ. Տեր-Պետրոսյանը, շահարկելով դրանք, պիտի ընդունի, որ ճիշտ են նաեւ 1998 եւ 2003 թթ. հայր եւ որդի Դեմիրճյաններին վերագրված քվեները: Բացի այդ, չնայած նա հայտարարել է, որ իրենից հետո տեղի ունեցած բոլոր ընտրությունները կեղծվել են, այնուամենայնիվ 1998-ին շնորհավորել է Ռոբերտ Քոչարյանին: Վերջապես, ոչ որ կասկած չունի, որ 1998 թվականին Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը 1996 թվականի ընտրությունների հետեւանքն էր:

Եթե 1996 թվականի ընտրությունների պաշտոնապես հայտարարված արդյունքները ճիշտ լինեին եւ Լ. Տեր-Պետրոսյանը սպացած լիներ այնքան ձայն, որքան հայտարարվել էր, ապա դժվար թե նրա հրաժարականը ժողովուրդն ընդուներ այն լուռ համաձայնությամբ, որին ականատես եղանք»:

Իհարկե, Լեւոն Տեր-Պետրոսյանի գնահատականներն ու դիտարկումները նույն ժամանակաշրջանի եւ նույն իրադարձությունների առնչությամբ ճիշտ հակառակն են, եւ նրա տեսանկյունից փաստարկումներ էլ կան, որոնք հիշատակված ասուլիսում ներկայացնելիս նախկին մեր երիտ ընկերոջ անունն էլ չարտաբերեց՝ ընդգծելու արհամարհանքը, որի ակունքը մեծապես հատուկ է եղել նախագահի ՀՀՇ թեկնածուին. «Ես ձեր ակնարկած մարդու նման ցանկապատեր չեմ կոտրելու, շենքեր չեմ գրավելու, խորհրդարանի նախագահի գլուխ չեմ ջարդելու: Եվ իմացեք, ձեր այդ թեկնածուն կործանվեց հենց այդ պատճառով»: Հազիվ թե այս գնահատականը հիշողության մասնակի կորստի հետեւանք լինի, այնուամենայնիվ ՀՀ նախագահի թեկնածու Վազգեն Մանուկյանի նախընտրական շտաբում անիմաստ չեն համարել հիշեցնել Լ. Տեր-Պետրոսյանին. «1996 թվականի ժողովրդական բարձումն իշխող վարչակարգի կողմից նախագահական ընտրությունների արդյունքների կեղծման հետեւանք էր: Եթե Լեւոն Տեր-Պետրոսյանը դատապարտում է 1996 թվականի համաժողովրդական ընդվզումը, ապա նրա քննադատության սլաքն ուղղված է ոչ միայն Վազգեն Մանուկյանի, այլեւ արդար ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանություն ձեւավորելու դեմ»:

Ի վերջո շաբի հայտարարությունում տեղեկացվում է, որ ընտրությունների կեղծումը բացառող, գործադիր իշխանությունից դատական իշխանության անկախությունը ապահովող նոր սահմանադրության ընդունումը Վազգեն Մանուկյանը դիտարկում է երկիրը զարգացման ուղիով տանելու միջոց եւ որպես դրույթ ներառել է իր նախընտրական ծրագրում:

Ճշմարտությանն անգամ հետադարձ ճիշտ հայացքով նայելն այնքան էլ հեշտ գործ չէ եւ դրա համար կամքի ու ազնվության անհրաժեշտ չափաբաժին էլ ամեն մեկին չի տրված, անկախ նրանից, թե պատմության կերտման որ փուլում ինչ դիրք է զբաղեցրել կամ ակամա նվեր ստացել այդ խնդիրն ունեցող անձը:

ՆԵՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ողջույն

«Ազգը» 2008 թ. հունվարի 10-ի համարում հրապարակեց Զորի Բալայանի հարցազրույցը, թյուրիմացաբար որպես սկզբնաղբյուր նշելով Hayinfo.ru կայքէջը, որը, ինչպես պարզվում է, նյութը վերցրել էր Haylife.ru-ից: Այդ մասին տեղեկացնում է հարցազրույցը վարած Նաստյա Մոշենսկայան, որ մեր թերթի մշտական ընթերցողներից է: Նա ափսոսանքով նշում է, որ թերթի տպագիր տարբերակում խախտված են նախնական եւ երկրորդային հեղինակային իրավունքները, հանի որ բացակայում են իր անունը (այն առկա է մեր թերթի էլեկտրոնային տարբերակում) եւ Haylife.ru-ի անունը, որի համար իրականացվել էր հարցազրույցը:

Այս կապակցությամբ ենթադրվող համապատասխան ուղղումը կատարելով՝ թերթի էլեկտրոնային եւ տպագիր տարբերակներում հաղորդում ենք, որ հարցազրույցը վարել է Նաստյա Մոշենսկայան հատուկ Haylife.ru-ի համար: Միեւնույն ժամանակ հայցում ենք հեղինակի եւ ընթերցողների ներողամտությունը:

ԿԻԼԻԿԻԱ-810 ԱՄՅԱԿ

Այս օրերին Անթիլիասում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության եւ Երեւանի Մատենադարանի նախաձեռնությամբ Կիլիկիո հայկական թագավորության 810-ամյակին նվիրված գիտաժողովին մասնակցում է նաեւ դոկտ. Վերժին Ավազյանը. որ Բեյրութ մեկնելուց առաջ մեզ տրամադրեց սույն հոդվածը:

Բյուզանդական կայսրությունը, հայերին վերաբնակեցնելով իր տերության փոքրասիական սահմանային նահանգներում, փորձում էր ոչ միայն հիսունյա հուսալի ոստայար ստեղծել ծահծեղական Արեւելքի դեմ, այլեւ վառում էր Հայաստանը ջլատելու, նրան ինքնուրույն ռեսական կյանքից զրկելու եւ հայերին հաղթողական դարձնելու հաղթականություն:

Հայերն այդ շրջաններում սանձալով ընդարձակ տարածքներ՝ ստեղծել են զարգացած տնտեսություն, իսկ կայսերական բանակին մատակարարել մարտունակ ու փառաբանված ռազմիկներ:

Հայերի վերաբնակեցման հաղթակնությունը զանգվածային բնույթ է կրել հատկապես 11-րդ դարում, երբ Բյուզանդիայի միջամտությամբ Անիի Բագրատունիների եւ մյուս տեղական իշխանությունների կործանումից հետո, սելջուկյան հոսանքների կոտորածներից ու բռնություններից խուսափող մի շարք իշխանական տներ՝ Վասպուրականից, Արծախից, Սասունից, Շիրակից եւ Հայաստանի այլ վայրերից իրենց զինուժի, վասալների եւ հարկատու զինակաների հետ տեղափոխվել են Կիլիկիա եւ բնակություն հաստատել Սիս, Մամեստիա, Ադանա, Տարսոն քաղաքներում եւ շրջակայում: Տիրելով ընդարձակ կալվածքների, քաղաքների ու բերդերի՝ հայերն ստիպված իրենց ձեռքն են կենտրոնացրել նաեւ ռազմական, քաղաքական ու տնտեսական կյանքը:

11-րդ դարում Կիլիկիայում շրջություն ունեցին հայկական մի շարք իշխանություններ, որոնցից ամենակենսունակն ու նշանավոր Բագրատունի վերջին թագավոր Գագիկ Բ-ի մերձավորներից Ռուբեն իշխանի հիմնած իշխանությունն էր Լեռնային Կիլիկիայում: Նա, 1080-ին դուրս մղելով բյուզանդացիներին, Կիլիկիայում հաստատել է հայկական ինքնուրույն իշխանություն՝ հաստատելով դեմը Սիս գեղեցիկ Վահկա բերդը դարձնելով Ռուբինյան իշխանության կենտրոն:

Կիլիկիայի հայկական իշխանությունը նշանակալի դերակատարություն է ունեցել իր հարեւան Բյուզանդական կայսրության, Սելջուկյան սուլթանության եւ Անտիոքի լատինական իշխանությունների հետ: Այդ տարիներին ամրապնդելով երկրի տնտեսությունը, հայերն ամրապնդեցին նաեւ ռազմական ներուժը: Հայերի վերաբնակեցման հաղթակնությունը զանգվածային բնույթ է կրել հատկապես 11-րդ դարում, երբ Բյուզանդիայի միջամտությամբ Անիի Բագրատունիների եւ մյուս տեղական իշխանությունների կործանումից հետո, սելջուկյան հոսանքների կոտորածներից ու բռնություններից խուսափող մի շարք իշխանական տներ՝ Վասպուրականից, Արծախից, Սասունից, Շիրակից եւ Հայաստանի այլ վայրերից իրենց զինուժի, վասալների եւ հարկատու զինակաների հետ տեղափոխվել են Կիլիկիա եւ բնակություն հաստատել Սիս, Մամեստիա, Ադանա, Տարսոն քաղաքներում եւ շրջակայում: Տիրելով ընդարձակ կալվածքների, քաղաքների ու բերդերի՝ հայերն ստիպված իրենց ձեռքն են կենտրոնացրել նաեւ ռազմական, քաղաքական ու տնտեսական կյանքը:

Քաղաքներն ու նավահանգստային կենտրոնները (Ադանա, Ալայա, Անարզաբա, Կոռիկոս, Մամեստիա, Սիս, Սելեւկիա, Տարսոն եւ այլն), գեղաշնչաղեղ լինելով առուների տիրույթներ, զարգացել են ռեսուրսի հովանավորությամբ: Ռուբինյան իշխանության օրոք Այասը եւ Անեխանդրյանը կատարել են առաջնակարգ նավահանգիստների դեր՝ արեւելքի եւ արեւմուտքի միջեւ: Կիլիկիայի քաղաքներում եւ նավահանգիստներում հայերի կողքին ապրել ու առեւտրել ռազմական ոստայններում առեւտուր են արել ասորիները, արաբները, հրեաները, հույները, ռուսիկները, իտալացիները, ֆրանսիացիները: Հայկական Կիլիկիան առեւտրական սերտ կապեր է ունեցել Իտալիայի, Ղրիմի, Հայաստանի, Ասորիքի, Եգիպտոսի, Իկոնիայի սուլթանության եւ այլ երկրների հետ: Կիլիկիայի թագավորները բազմաթիվ միջազգային առեւտրական ռազմանագրեր են կնքել Ջենովայի, Պիզայի, Ֆլորենցիայի, Սիցիլիայի, Մարսելի եւ այլ քաղաքների առեւտրական ընկերությունների հետ: Առաջին անգամ հայերեն տառով դրամներ հատարակ են հանվել Կիլիկիայում:

Ռեսուրսի կենտրոնական եւ տեղական կառավարման կարեւոր օղակներն են եղել դատաստանները՝ Վերին եւ Մեծ Դատարանը, թագավորի նախագահությամբ: Արտաքին թշնամիներից երկիրը ռազմական ամրոցներ եւ ներսում իր տիրապետությունն ամրապնդելու համար առանձին տեղեր էր ստեղծել մշտական կանոնավոր եւ մարտունակ բանակ:

Երկրի բարեբախտ կլիման, բերրի գետահովիտներն ու արգավանդ դաշտավայրերը նպաստել են երկրագործության, իսկ լեռնային ճշտադաշտ արտավայրերը՝ անասնապահության զարգացմանը:

Լեւոն Բ Մեծագործ թագավորի օրոք Կիլիկիան ունեցել է շուրջ չորս հարյուր քաղաքներ ու բերդեր, որոնցից ամենից հռչակավորներն են եղել քաղաքամայր Սիսի բերդը, ապա՝ Անարզաբան, Վահկան, Կապանը, Լամբրոնը, Լեւոնկլան, Բաղեն, Բարձր բերդը, Անձուտը, Առյուծը, Արեգնին, Բերդուսը, Ընկուզուսը եւ այլն:

Երկրի ավելի քան մեկ միլիոն բնակչության զգալի կեսն ապրել է քաղաքներում: Քաղաքային բնակչության ամենասվար խավը կազմել են արհեստավորներն ու առեւտրականները: Արհեստներից առանձնապես զարգացած են եղել արծաթագործությունը, ոսկերչությունը, մանրանկարչությունը, զինագործությունը, մանածագործությունը, գորգագործությունը, կաղամեռագործությունը, ապակեգործությունը, դեղձակությունը, ոսկեգործությունը, դարբնությունը, նավաշինությունը, փայտի, կաշվի, սեւ եւ գունավոր մետաղների մշակումը եւ այլն:

Հայկական մշակույթի ծաղկումը պայմանավորված է եղել Հայկական Կիլիկիայի քաղաքական ու տնտեսական անհախադեղ վերելքով: Այն զարգացել է հայ բազմադարյան մշակույթի ավանդների հիման վրա: Պետական արհեստիվ հովանավորել ու խրախուսել է հայ մտավորականների մշակութային նախաձեռնությունները: Օրինակ՝ Կոստանդին Ա-ն հիմնադրել է Կաստամոնին, Թորոս Ա-ն՝ Դրազարկի ու Մաշկեւորի, Մլեհը՝ Մեծ քարի, Լեւոն Բ-ն՝ Սկեւռի եւ Գայլու վարդապետարանները: Թորոս Բ-ն եղել է հմուտ բանաստեղծ, Լեւոն Գ-ն, որն ստացել է «Գրաստ» ազատանունը, մշակել է Սկեւռի հռչակավոր վարդապետարանի ծրագիրն ու կանոնադրությունը, կազմակերպել ընտիր եւ հազվագյուտ ձեռագրերի հավաքման եւ ընդօրինակման գործը: Լեւոն Գ-ին աջակցել է իր կինը՝ Կեռան թագուհին: Հայ մշակույթի զարգացմանը մեծապես նպաստել են Ջաբել թագուհին, Կոստանդին թագավորահայրը, Հեթում Բ եւ Օշին թագավորները:

Հայկական Կիլիկիայի մշակութային կենտրոններում գործող հայ մտավորականները խնամով հավաքել, ուսումնասիրել եւ բազմացրել են նախորդ դարերում ստեղծված հազարավոր ձեռագրեր, թարգմանել աստվածաշունչ, աստվածաբանական, լատիներեն, հունարեն բազմաթիվ գիտական ու գրական արժեքավոր գրքեր: Գրչության արվեստի հիմնական սկզբունքները տեսականորեն մշակվել եւ ընդհանրացվել են Կիլիկիայում: Գիտական, գրական, ինչպես նաեւ գեղարվեստի բազմաթիվ ստեղծագործություններ ունեն Վեռաբնության դարաշրջանի հատուկ տարեր:

Այդ ժամանակի ռեսական առաջավոր գործիչներն ու մտավորականները՝ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Սմբատ սպարապետը, Հովհաննես Պլուզ Երզնկացին, Սուքսես Երզնկացին եւ ուրիշներ առաջադրել են դեռահաս սերնդի համընդհանուր ուսուցման եւ դաստիարակման գաղափարը: Այդ նպատակով երկրի բազմաթիվ բնակավայրերում եւ վանքերում բացվել են դպրոցներ, որտեղ միաժամանակ սովորել են հարյուրավոր երկսեռ աշակերտներ: Կրթությունը եղել է ձրի եւ մատչելի: Առավել ընդունակներն ուսումը շարունակել են բարձրագույն մասնագիտացված դպրոցներում կամ վարդապետարան-համալսարաններում, որտեղ դասավանդել են աստվածաբանություն, իմաստասիրություն, տաճաբանություն, իրավագիտություն, դիվանագիտություն, բժշկագիտություն, տարաբանություն, օտար լեզուներ, ինչպես նաեւ երգեցողական, գեղանկարչական ու երաժշտական արվեստներ: Այդ առարկաները դասավանդել են արհեստիվ նշանակած հայերն ուսուցչապետներ՝ գիտնականներ, աբբահայրեր, վարդապետներ, որոնք ստացել են անվանի գիտնականներ, ռեսական ու հոգեւորական բարձրաստիճան անհատներ: Ուսուցումը կատարվել է ժողովրդի խոսակցական լեզվով՝ Կիլիկյան միջին հայերենով:

Կիլիկիայում հայկական ուսումնագիտական խոշոր կենտրոններ են եղել Սկեւռը, Արեւելակողմը, Դրազարկը, Հեղանքը, Մաշկեւորը, Մեծ քարը, Մլեհը, Ձեռնաբերդը, Սկեւռան, Տարսոնը եւ այլ քաղաքների վարդապետարաններ: Սեւ լեռան վարդապետարաններից հռչակված են եղել Արեգնին, Շաբիրին, Շուրբը, Պաղակ Օիակը, Պալահոնը (Դրախտ Ասուռն), Վարդկան, Քարաշեղը: Սիս մայրաքաղաքի բազմաթիվ կրթարաններից հայտնի է եղել Ներսես Լամբրոնացու հիմնադրած ախտարիկ համալսարանը, որտեղ կրթվել են ռեսական խոշոր գործիչներ եւ գիտնականներ: Այնտեղ դասավանդող ականավոր գիտնականները թարգմանել եւ ուսումնասիրել են Հոմերոսի, Պլատոնի, Սոկրատեսի, Արիստոտելի, Էվկլիդեսի, Թեոփանեսի, Պղուտարքոսի եւ այլոց երկերը: Դրազարկի վարդապետարանը հռչակվել է լեզուների ուսուցմամբ, գրչության, գեղանկարչության, երաժշտության բարձր արվեստով: Այնտեղ է սովորել մանանկարչության անկրկնելի ծաղկող Սարգիս Պիծակը: Այնտեղ դասավանդել են Հովսեփ երաժշտաբեր, առաջնակարգ Վարդան Այգեկցին եւ շատ ուրիշներ: Սեւ լեռան վարդապետարաններից մեկում ուսումը կատարելագործել է Մխիթար Գոշը, Շուրբում՝ Ներսես Շնորհալին եւ Գրիգորիսը: Պալահոնում դասավանդել են Գեւորգ Մեղրիկը, Գրիգոր Լոռեցին եւ ուրիշներ: Գիտության, արվեստի եւ գրչության խոշորագույն կենտրոն Մեծ քարում դասավանդել են Հակոբ վարդապետը, Գրիգոր Մագիստրոսը եւ Հովհաննես Պլուզ Երզնկացին: Սկեւռայի վարդապետարանում են կրթվել Գրիգոր Սկեւռացին եւ Ներսես Լամբրոնացին: Կիլիկիայում մեծ հռչակ են վայելել նաեւ Մխիթար Հերացին, Արուսյակը, Գրիգորիսը, Սիմեոնը, Ճուսինը, շատ ուրիշ բժիշկներ եւ նշանավոր դեմքեր: Հայաբնակական կյանքի տարբեր ասպարեզներում հանդես եկած այս կարկառուն ներկայացուցիչների շարքը նկատի ունենալով՝ Հովհաննես Հիշատակիրը Կիլիկիան անվանել է «Երկիր իմաստասիրաց ու ուսումնասիրաց»: Իսկ հետագայում անվանել են «Հայ մշակույթի արծաթե դար»:

Այդ ասպարեզներից բացի ժամանակագրությամբ եւ պատմագրությամբ են զբաղվել նաեւ ախտարիկ ու հոգեւոր մի շարք ռեսական գործիչներ: Հիշատակության են արժանի Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) «Տարեգիրքը» եւ նրա գլուխգործոց «Դատաստանագիրքը» (1265 թ.), ապա՝ Մատթեոս Ուռհայեցին, Գրիգոր Երեց Քեռնենին, Մամվել Անեցին, Վարդան Այգեցին, Մարաֆիա Արեղան, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին եւ շատ այլ պատմաբաններ, որոնք ոչ միայն սնունդ ու ճշմարտացի նկարագրել են Հայկական Կիլիկիայի 300-ամյա հերոսական ու սխրալի պատմական իրադարձությունները, այլեւ անհնարին կսկիծով ողբացել օտարերկրյա նվաճողների դեմ մեր իրատեսաջորդ հայ թագավորների առաջադրած ջանքերը՝ պահպանելու համար Լեւոն Բ Մեծագործ թագավորի հիմնադրած երբեմնի փառահեղ Հայկական Կիլիկիայի ռեսականությունը:

1375-ին մամլուքների արշավանքների հետեւանքով Հայկական Կիլիկիայի թագավորությունն անկում է ապրում: Սակայն վեց դար շարունակ ռեսականությունից զրկված հայ ժողովրդի համար Կիլիկիան մնացել է որպես մշտարուն երազանք...

Պատահական չէ, որ ներկայիս Հայաստանի Հանրապետության ռեսականությունն իր մեջ ամփոփում է ընդհանրապես հայկական պետական անցյալի եւ հատկապես Կիլիկյան 300-ամյա ռեսականության երբեմնի փառքը, որի հարատեւության համար հայ ժողովուրդը աղոթախառն տողեր է հղում առ Աստված.

«Տե՛ր, դուն պահե միշտ անսասան
Դիւցազնական Մայր-Հայաստան.
Տուր հաւատ ազատութիւն,
Կամք ու արեւ, խաղաղութիւն,
Հայ դրօշով մեր ռեսական,
Թող միշտ արդի ազգն հայկական.
Ամեն»:

1. Հավատալ Թալաբանիին, որքան էլ նախորդ նախագահ Սեզերը նրան Իրաքի նախագահ ճանաչելու հակամետ չունենար: Աբդուլլահ Գյուլը որպես պետության բարձրագույն ղեկավար, պետք է մերժի Սեզերի մոտեցումը եւ Անկարայում ամենաբարձր մակարդակով ընդունի Ջալալ Թալաբանիին, որը 3 պաշտոնական այց է կատարել Իրան, հյուրընկալվել է ԱՄՆ-ի եւ ԱՄ-ի մայրաքաղաքներում, ինչպես նաեւ արաբական աշխարհում, այն էլ որպես Իրաքի ամբողջականությունն ու միասնականությունը խորհրդանշող նախագահ:

2. Հանդիպել Բարզանիի հետ: Թեեւ մեկ տարի առաջ Իրաքի Քուրդիստան շրջանի կառավարության ղեկավար Նաչիրվան Բարզանիին չհաջողվեց գալ Սամսուն եւ հանդիպել Գյուլին, սակայն ժամանակն է, որ այդ հանդիպումը վերջապես կայանա: Պետք է ճանաչել PKK-ի հարցում առանցքային դեր ունեցող երբիլի վարչակարգին: Վերջերս Իրանը վարչապետի կարգավիճակով ընդունեց Նաչիրվան Բարզանիին եւ նրա հետ ստորագրեց առեւտրական պայմանագիր:

3. Բացել Հայաստանի հետ սահմանը: Փակ պահելով այս սահմանը Թուրքիան Բաքվին է ենթարկում իր արտաքին քաղաքականությունը եւ հայտնվում է Հարավային Կովկասում խնդիրների լուծման դեռեւս արտությունից կանխավ հրաժարվողի դիրքում: Հայաստանի նախագահական ընտրություններից անմիջապես հետո, անկախ արդյունքներից, Անկարան նոր եւ հանդուգն քայլեր պետք է կատարի Երեւանին ընդառաջ: Հայաստանի հետ դիվանագիտական նորմալ հարաբերությունների հաստատումը, երկխոսության շարունակումը, համագործակցության ոլորտների բացումը միանգամայն հնարավոր է, անկախ ցեղասպանության հարցի նկատմամբ կողմերի հակադիր դիրքորոշումից: Ակնհայտ է, որ համանման շփումների հաստատումը կմեծացնի պատմական խնդիրների շուրջ խոսակցություն ծավալելու հնարավորությունը:

Ինչ խոսք, հնարավոր է նաեւ, որ Գյուլն ու էրդողանը, ելնելով «պետականության ռեֆլեքսից կամ ազգայնական հակազդեցությունից» շարունակեն հեռանգել վերոհիշյալ 3 քայլերի կատարումը: Այդ դեպքում ինքնաբերաբար կհետաձգվի նաեւ «նորմալացումը» երկրում, որի հետեւանքով Թուրքիան ավելի շատ կտուժի»:

Հ. Ծ.

Ինտերպոլի կաշառասուն նախագահը հրաժարական տվեց

Ինտերպոլի նախագահ, Հարավաֆրիկյան Հանրապետության ոստիկանության ղեկավար Ջեկի Սելեբին, որը վերջերս ամբաստանվել էր կաշառակերության մեջ, հունվարի 13-ին հրաժարական է տվել:

Ֆրանսպրեսը վկայակոչում է միջազգային ոստիկանական գործակալության ստանված հաղորդագրությունը, որի համաձայն Սելեբին կազմակերպության քարտուղարությանը հղած գրության մեջ խնդրել է իրեն պաշտոնից ազատել «ի շահ Ինտերպոլի»:

Նույն օրը նույնը ՀԱՀ նախագահ Թաբո Մբեկին հանդիպեցրեց ոստիկանապետին ուղարկել է երկարատեւ արձակուրդ:

Կասկածներ կան, թե Սելեբին մոտ 170 հազար դոլար կաշառք է ստացել մի գործարարից: Վերջինս մեղադրվում է պատվիրված սպանության եւ մի քանի այլ ծանր հանցանքների մեջ: Ինտերպոլի արդեն նախկին ղեկավարը մերժում է իրեն ուղղված բոլոր մեղադրանքները:

Հարավաֆրիկյան Հանրապետության լրատվամիջոցները ենթադրում են, որ Սելեբին թերեւ հանրապետության երկու ազդեցիկ իրավապահ կառույցների պայքարի զոհն է դարձել: Խոսքը «Սկորպիոն» հակակոռուպցիոն ստորաբաժանման եւ տեղական ոստիկանության մասին է:

Ուկրաինացիները տանը կստանան ԽՍՀՄ խնայբանկի արժեզրկված ավանդները

Ուկրաինայի վարչապետ Յուլիա Տիմոշենկոն երեկ Ղենթոռոդետրովսկում հայտարարել է, որ երկրի խնայբանկը եւ փոստային ծառայությունը համաձայնագիր են ստորագրել ԽՍՀՄ խնայբանկի արժեզրկված ավանդների փոխհատուցումները բնակիչների տներ հասցնելու վերաբերյալ:

«Անկասկած, այսօր փոխհատուցումների վճարումը դժվար է նախ եւ առաջ այն պատճառով, որ խնայբանկի («Օշչադբանկ») գործող համակարգը հաշվարկված չէ մարդկանց այսքանի մեծ հոսքի համար», նշել է վարչապետը: Նա խոստացավ, համաձայնագրի կնքումը կնվազեցնի ավանդատուների հերթերը:

Արդեն այսօրվանից «Օշչադբանկի» բաժանմունքներում ավանդատուներին կբաժանվի դիմումի նմուշ, որտեղ մարդիկ կարող են նշել իրենց հասցեն, ավանդի չափը եւ դրանը տանն ստանալու համաձայնությունը: Փոստային ծառայությունը կմատուցվի անվճար:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ 1 խորհրդային ռուբլու դիմաց ուկրաինական 1,05 գրիվնայի չափով վճարումներն Ուկրաինայում սկսվել են հունվարի 11-ից: Փոխհատուցման շրջանակներում երկրի բնակչությանը կվերադարձվի 20 մլրդ գրիվնա կամ 4 մլրդ դոլար:

Մեծ Բրիտանիան տարեկան 20 մլն ֆունտ է ծախսում հանցագործներին պաշտպանելու համար

Մեծ Բրիտանիայի իշխանությունները տարեկան մոտ 20 մլն ֆունտ ստերլինգ են ծախսում հանցագործներին իրարից պաշտպանելու համար: «Դեյլի թելեգրաֆ» թերթի տվյալներով, միայն Լոնդոնում 2007-ին ոստիկանությունը 75 գործողություն է ձեռնարկել իրավախախտների կյանքին սպառնացող վտանգի վերացման նպատակով:

Նշվում է, որ հնարավոր գոհերը չեն իմացել իրենց սպառնացող վտանգի մասին. ոստիկանները նախընտրել են ոչ թե զգուշացնել նրանց, այլ հետեւել եւ ձերբակալել հանցանքի մասնակիցներին:

Հաղորդվում է նաեւ, որ բրիտանական ոստիկանությունը ենթադրում է վեց տասնյակ առեւանգումների գործեր: Ընդսմին պատանդների մեծ մասը ինչ-որ հանցագործության մեղսակից է: Համախմբ պատանդ են վերցվում հրեական ընկերակցությունների ներկայացուցիչների մերձավորները կամ բարեկամները: Ոստիկանության տվյալներ վկայակոչող լոնդոնյան թերթը նշում է, որ նման առեւանգումներն ամենից հաճախ ձեռնարկվում են պատասխանների վրա ճնշում բանեցնելու նպատակով:

Մ. ԽԱՀԱԼԵՐԵՐ

Հուր երեկո նվիրված «պապա Կունցլերին»

Արլինգտոնի (Մասաչուսեթս) Հայ մշակույթի հասատության (ՀՄՀ) հավատավորում դեկտեմբերի 9-ին տեղի է ունեցել հուր երեկո նվիրված օվերլարացի միսիոներ Զեկոբ Կունցլերին, տեղեկացնում է «Արմինյն միրոր ստիեթեյթր» շաբաթաթերթը:

Երեկոյի ընթացում ընթերցողներին է ներկայացվել նրա «Արյան եւ արցունքի երկրում: Փորձառություններս Միջագետքում հայաբնակ տարեցների (1914-1918 թթ.)» գրքի անգլերեն թարգմանությունը, խմբագրությամբ ՀՄՀ-ի գործադիր տնօրեն դոկտ. Արա Ղազարյանցի եւ պրոֆ. Վահագն Տատրյանի առաջաբանով:

Պրոֆ. Տատրյանը նաեւ օրվա գլխավոր բանախոսն է եղել: Նա խոսել է հայերիս միլ ծանոթ միսիոների, բժշկի եւ մարդասեր-բարեգործի մասին, նշելով, որ նա եղեռնից մազապուրծ հազարավոր հայերի կյանքն է փրկել, եւ նրա հուշերի գիրքը եզակի նշանակություն ունի, քանի որ այնտեղ ամփոփված են ականատեսի վկայություններ:

Կունցլերը Ուրֆա է ժամանել 1899-ին՝ աշխատելու Լեփսիուսի հանձնարարությամբ տեղի զվեյցարական հիվանդանոցում: Տիրապետելով թուրերենին, քրդերենին, արաբերենին եւ հայերենին, նա շուտով սերտ հարաբերություններ է հաստատում ինչպես հայերի, այնպես էլ թուրերի հետ, որոնցից իմանալով որոշակի գաղտնիքներ, կարողացել է ժամանակին փրկել շատ հայերի, իսկ եղեռնից հետո օգնել մոտ 8000 տեղահանված հայերի հաստատվելու Միջին Արեւելքում:

Կունցլերը ամուսնացել է զվեյցարացի բուժքույր Էլիզաբեթ Բենդերի հետ եւ Թուրքիայից հետո հեծագրում արել Հալեպում եւ Բեյրութում իրենց «որդեգրած» հայերի հետ, որոնք էլ նրան անվանել են «պապա Կունցլեր»: Լիբանանում նրանք ղեկավարել պաշտոններ են զբաղեցրել «Նիքոլ իսք ֆաունդեշն» հաստատությունում, որն օգնել է ավելի քան 1.400 որբերի, հիմնականում աղջիկների, որոնց տեղավորել է Կունցլերի հիմնած գյուղատնտեսական ֆաբրիկայում:

Կունցլերը մահացել է 1949-ին Ղազիրում (Լիբանան), իսկ կինը շարունակել է նրա գործը մինչեւ իր մահը՝ 1968 թվականը:

Երեկոյի մեծագույն անակնկալը եղել է Կունցլերի ամենափոքր դստեր՝ հնգսունամյա էլիզաբեթ Կունցլեր-Մարշալի ներկայությունը, որը հատուկ այդ առիթով ժամանել էր Կալիֆորնիայից: Նա հուզախառն զգացմունքներով պատմել է, թե հոր նման վերաբերմունքը պետք է վերադարձ նրա դարը կենսագրությանը: «Նա որբացել էր 7 տարեկանում, իսկ կինը՝ 4 տարեկանում: Նրանք միասին երազել են ընտանիք կազմելու մասին, փայփայել այդ ցանկությունը», ասել է նա իր ելույթի ընթացքում, ավելացնելով, որ հայրը եղել է «չափազանց կրոնասեր եւ ձեւապաշտ» անձնավորություն, մինչ մայրը՝ «հարմարվող եւ գործնական»:

Հուր երեկոյին ներկա են եղել նաեւ Կունցլերի ընտանիքի այլ անդամներ՝ եվրոպայից եւ Մերձավոր Արեւելքից, Ռոբերտ Միրաքը՝ ՀՄՀ-ի գլխավոր հովանավորը, գրքի հովանավոր Մեսրոպ Բչակյանը, դոկտ. Քրիստոֆ ֆոն Արբը՝ Նյու Ինգլենդում Զվեյցարիայի հյուպատոսը:

Հ. ՕՍԻՆՅԵՆ

Քեմում էին Հայորդաց տան սաները

Հունվարի 13-ին Առամ Խաչատրյան համերգասրահի բեմը տրամադրվել էր Մայր աթոռ Սբ. Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության հայորդաց տների գեղարվեստական խմբերի սաներին: «Լույսի գաղտնիք» խորագիրը կրող մանկական բեմական համերգային ծրագրով ազդարարվեց տոնական հանդիսությունների փակումը: Մոս երկու ժամ տեւած գեղեցիկ, ճաշակով ու հեռահրահրական միջոցառման ընթացքում Ջմեռ պապն ու Ձյունանուշը հայորդաց տան սաների հետ «երջեցին» ափխարհի տարբեր մասերով, փնտրեցին լույսի գաղտնիքը, որը չկարողացան գտնել անգամ Փորիկ Իշխանի հեքիաթային ու գաղտնիքներով լի մոլորակում: Բայց ի վերջո, բարությունն ու ազնիվ մարդիկ օգնեցին: Եվ հենց այդ կան՝ Վանաձորում, Աշտարակում, Էջմիածնում եւ մեկը՝ «Մանուկաբույության կենտրոնը» Քանաթեռ համայնքում: Յոթ հայորդաց տներ են հաճախում շուրջ 4000 աշակերտ ու սաներ գեղագիտական, հոգեւոր ու մշակութային դաստիարակություն»: Տեր Գրիգոր աբեղան հույս հայտնեց, որ «հայորդաց տների թիվը կավելանա հաեկաթես մարզերում, որոնցի մարզերի երեխաներն էլ մոտիկից ստիպեն մեր հարուստ ժառանգությանը»:

Ճիշտ 15 տարի առաջ նախկին ոիոներ դալաստների հիմի վրա, ներկայիս Վեհափառ հայրապետի, այն ժամանակ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի կողմից ստեղծվեցին 3 հայորդաց տներ՝ ՀԲԸՄ եւ Լուիզ Սիմոն-Մանուկյանի հովանավորությամբ: «Նորի հայորդաց տան 53 սաների եւ 8 մանկավարժների հետ մեկ ամիս մենք հյուրընկալվեցինք ԱՄՆ-ի Կալիֆորնիայի ու Տեխաս նահանգներում, Լոս Անջելեսում, Դալլասում, Սան Ֆրանցիսկոյում: Պետք է ասեմ, որ խանդավառությունը շատ մեծ էր ու ամենուր հայորդաց տան ազգագրական, պարի ու կրկեսային խմբերի սաների ելույթները ընթանում էին երկարատեւ ծափերով: Հաճերգներին զուգահեռ մեր ծրագրերում ընդգրկել էինք նաեւ հայկական դպրոցներ հաճախելը եւ նրանց համար, ովքեր հնարավորություն չունեին գալու մեր համերգներին փոքր համերգային ծրագիր ներկայացնելը, որոնք ամենուր ընդունվում էին ջերմությամբ ու հետաքրքրասիրությամբ: Շատերին հուզում էր, թե ինչպիսին է այսօրվա Հայաստանը եւ ինչպես է կերտվում մեր արդյան հայորդաց տների մանուկների ձեռքերով»:

«Ինչ տպավորություններով վերադարձաք եւ ինչ ծրագրեր ունեք առաջիկայում» «Ազգի» հարցին ելով պատասխան՝ «Վերադարձանք, իհարկե, ավելի հարստացած, որովհետեւ տեսանք, թե ինչպես էին մեզ սպասում Միացյալ Նահանգներում եւ ինչպիսի ակնկալիներ ու հույսեր ունեին: Հույս ունենք, որ առաջիկայում կայցելենք Ռուսաստան, Ֆրանսիա եւ այլ երկրներ, որոնց հետ համագործակցությունը իր արդյունքը կտա: Ասեմ, որ նոր հայորդաց տներ կբացվեն Գյումրիում, Արարատում, Գավառում, Սեւանում, Արտաշատում, իսկ սփյուռքում նման կառույցներ ստեղծելը մի փոքր այլ է»: «Հյուրախաղերի հետ կապված դժվարություններ եք ունեցել, ինչպես դրանք հաղթահարեցիք» հարցին հայր սուրբը պատասխանեց. «Հենց առաջին օրվանից սկսվեցին դժվարությունները: Դալլասում առաջին համերգը մեր երեխաները պարեցին առանց համազգեստի, քանի որ ԱՄՆ մեր չվերթը իրականացնող ավիաընկերությունը մեր ճամպրուկները տեղ չէր հասցրել ու խոստացել էր երկու օրից բերել: Սակայն այդպես էլ մինչեւ համերգի վերջին օրը մենք բեմական զգեստներով չկարողացանք հանդես գալ: Իհարկե դա շատ էր ընկճել երեխաներին առաջին օրը, բայց նոքա շատ արագ կարողացան դուրս գալ այդ իրավիճակից... Համերգի վերջին օրը միայն մեր սաները հանդես եկան զգեստներով ու առաջացրեցին, որ կարեւորը սերն է ու նվիրումը ընտրած գործին, այլ ոչ թե հագուստը: Հայորդաց տան ամեն մի սան խոր գիտակցում է պատկանելությունը Մայր աթոռ Սբ. Էջմիածնի ու ՀԲԸՄ, ու ամեն ինչ անում են պատվով կրելու այդ հաստատության սան լինելու կոչումը, հոգեւոր ու մշակութային դաստիարակություն ստանալով»: Այսօր արդեն մի մեծ կուտ ընտանիք դարձած հայորդաց տները մեծ դեր ու նշանակություն ունեն մեր երկրի մասաղ սերնդի դաստիարակության գործում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԱՐՅԱՆ

Արդեն ստացվել է 100-ից ավելի պատվիրակների հայտ

Երիտասարդների եւ սիրո բարեխոս Ս. Սարգսի՝ հունվարի 21-ին կայանալիք տոնի առթիվ Արարատյան հայրապետական թեմը հայտարարել է սիրո իրական պատմությունների եւ պատմվածքների մրցույթ երեք թեմաներով՝ «Ս. Սարգիս՝ մեր սիրո բարեխոս», «Ս. Սարգիս՝ մեր ամուր ընտանիքի բարեխոս» եւ «Ս. Սարգիս՝ ամուր ընտանիք, ամուր հայրենիք»: Ինչպես «Նոյյան տապան»-ի թղթակցին հայտնեցին Արարատյան հայրապետական թեմի մամլո դիվանից, արդեն ստացվել են 100-ից ավելի պատմվածքների ու սիրո պատմությունների հայտեր: Դրանք մանրակրկիտ կընթերցեն կազմակերպիչները եւ յուրաքանչյուր թեմայի համար կընտրվի լավագույն աշխատանքը: Հիշյալ 3 թեմաների համար սահմանվել են դրամական մրցանակներ, համապատասխանաբար, 150, 100 եւ 50 հազար դրամի չափով: Իսկ լավագույն աշխատանքները կտպագրվեն «Հոգեւոր Արարատյան» Արարատյան հայրապետական թեմի պաշտոնաթերթում:

Բացի իրական սիրո պատմություններից եւ պատմվածքներից, Արարատյան հայրապետական թեմը հայտարարել է նաեւ նույն թեմաներով նկարչական եւ ֆոտոռեպորտաժների մրցույթներ, որոնց համար եւս սահմանված են դրամական պարգեւներ: Հայտերի ընդունման վերջին ժամկետը հունվարի 17-ն է:

Ս. Սարգիս տոնին նվիրված տոնակատարությունները հունվարի 21-ին կեզարափակվեն Ալ. Սաթենիկյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայանալիք տոնական մեծ համերգով: Իսկ համերգից երկու ժամ առաջ թատրոնի նախասրահում կկազմակերպվի ֆոտոռեպորտաժների եւ նկարչության մրցույթների խաչ լավագույն աշխատանքների ցուցահանդես-վաճառք: Ավելի ուշ՝ համերգի ավարտին, կհայտարարվեն մրցույթների հաղթողների անունները, նրանց կհանձնվեն դրամական պարգեւներն ու տոնը խորհրդանշող մրցանակները:

Չին բեմադրիչը ձերբակալվել է թմրամոլության համար

Չինաստանի ոստիկանությունը բեմադրիչ Չժան Յուանին ձերբակալել է այն բանից հետո, երբ Յուանի ոստիկանությունը բնակարանում նրան բռնեցրել են թմրադեղեր ընդունելիս: Ոստիկանության տեղեկությունների համաձայն, ոստիկանները 45-ամյա կինոբեմադրիչի բնակարան են ներխուժել այն պահին, երբ նա իր չորս ընկերների հետ զանազան թմրանյութեր էր ընդունում: Բուժզննությունը հաստատել է Յուանի արյան մեջ կեսամիսի առկայությունը:

Չժան Յուանի «Փորիկ, կարմիր ծաղիկներ» կինոնկարը մրցանակ է ստացել Բեռլինի կինոփառատոնում, իսկ ինքը «վեցերորդ սերնդի» չին առաջատար բեմադրիչներից մեկն է: Տվյալ ուղղությունը ներկայացնող բեմադրիչները հայտնի են իրենց հերձիկային աշխատանքներով:

Պ. Բ.

Ուղղում. Մեր թերթի 12 հունվ. 2008-ի մշակութային հավելվածում թույլ է տրվել գրաբարական ցավալի վրիպում. Յուրի Խալաթյանի «Լուսեղեն ճամփի անցորդ՝ Ծահրաս» գրքում Ծահրասի «Բան բառի քով» գրի նկարագրի ներքեւ գրված բառը ընթերցվել է «մեկնաբանությամբ»: Հետեւաբար այդ տողը պետք է կարդալ՝ «(Ցասորը) լույս է տեսել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսյանի մեկնաբանությամբ»:

ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ոսկե գլոբուսներ» հանձնվեցին, շնորհած սցենարիստների գործադուլին

Չնայած հոլիվուդյան սցենարիստների զանգվածային գործադուլին, երեկ Լոս Անջելեսում անսովոր պարզ պայմաններում տեղի է ունեցել «Ոսկե գլոբուս» մրցանակների շնորհման 65-րդ արարողությունը: Մեկնաբանների միահամուռ բնորոշմամբ, արարողությունն անհնար է շոու անվանել, քանի որ բարունակվող գործադուլի պատճառով դափնեկիրներից ոչ մեկը ներկա չէր միջոցառմանը:

Կինոասպետների բացակայության պայմաններում ամերիկացի հայտնի հեռուստահաղորդավարները մի անշուք մամլո ասուլիսում հրապարակել են հաղթողների ցանկը 25 անվանակարգերում:

Յոթ անվանակարգում «Գլոբուսի» հավակնած Ջո Ռայթի «Քավություն» ֆիլմը հաղթող է ճանաչվել «Լավագույն դրամա» անվանակարգում, որտեղ նրա մրցակիցներն էին Ռիդլի Սքոթի «Գանգստեր», Պոլ Անդերսոնի «Նավթ», Կոեն եղբայրների «Սա ծերերի տեղը չէ», Դեւիդ Կրոնենբերգի «Արահանվող արաս», Թոնի Գիլրոյի «Մայել Քլեյթոն» եւ Դենզել Վաշինգտոնի «Մեծ վիճողներ» ֆիլմերը: «Քավությունը» մրցանակ է ստացել նաեւ որպես կոմպոզիտորական լավագույն աշխատանք:

«Լավագույն կատակերգություն» ֆիլմը հաղթող է ճանաչվել «Լավագույն դրամա» անվանակարգում, որտեղ նրա մրցակիցներն էին Ռիդլի Սքոթի «Գանգստեր», Պոլ Անդերսոնի «Նավթ», Կոեն եղբայրների «Սա ծերերի տեղը չէ», Դեւիդ Կրոնենբերգի «Արահանվող արաս», Թոնի Գիլրոյի «Մայել Քլեյթոն» եւ Դենզել Վաշինգտոնի «Մեծ վիճողներ» ֆիլմերը: «Քավությունը» մրցանակ է ստացել նաեւ որպես կոմպոզիտորական լավագույն աշխատանք:

«Լավագույն կատակերգություն/մյուզիքլ» կարգում «Գլոբուս» է ստացել Թիմ Բարթոնի «Սիլնի Թոդ» ֆիլմը, իսկ Ջոնի Դեպը ճանաչվել է լավագույն դերակատար:

«Լավագույն դրամատիկ դերասան է ճանաչվել Դենիել Դեյ-Լյուիսը («Նավթ»):

Լավագույն դրամատիկ դերասանուհին այս անգամ Ջուլի Քրիստին է «Նրանից հետո» ֆիլմում իր դերակատարման համար: Կատակերգության մեջ խաղացած գլխավոր դերի համար մրցանակ է ստացել դերասանուհի Մարիոն Կոտիյարը («Կյանքը վառագույն լույսով»):

Լավագույն ռեժիսորական աշխատանքի է ճանաչվել Ջուլիան Շնաբելի «Սուզակազգեստ եւ թիթեռ» ֆիլմը, որը «Գլոբուս» է ստացել նաեւ որպես լավագույն օտարալեզու ֆիլմ:

Լավագույն սցենարի համար «Գլոբուս» են ստացել Իթան եւ জոել Կոենները («Սա ծերերի տեղը չէ»): Տղամարդու եւ կնոջ լավագույն երկրորդական դերերի համար մրցանակներ են շնորհվել Խավիեր Բարդեմին («Սա ծերերի տեղը չէ) եւ Քեյթ Բլանշեթին («Ես այնտեղ չեմ»):

Օտարերկրյա մամուլի հոլիվուդյան ընկերակցությունը լավագույն մուսֆիլմ է ճանաչել «Ռասատոյ» ֆիլմը:

Պ. Բ.

Ադրիանո Չելենտանոն 70 տարեկան է

Իտալացի հանրահայտ երգիչ եւ կինոդերասան Ադրիանո Չելենտանոն հունվարի 6-ին դարձավ 70 տարեկան: Նախկին ԽՍՀՄ հաղթաթղթերը լավ են հիշում երկու տասնամյակ առաջ տեղի ունեցած նրա մոսկովյան երգագայությունն ու ելույթները: Բայց երկրորդ անգամ Չելենտանոյին Մոսկվա բերել այդպես էլ չհաջողվեց, քանի որ նա խորհում է օդանավերից եւ շատ լարված հյուրախաղերից:

Իր երգերի եւ կինոյում խաղացած դերերի շնորհիվ Չելենտանոն մեր մեջ տպավորվել է որպես հասարակ, չարաճճի, հանդուգն, փոքր-ինչ խորամանկ, բայց մշտապես համակրելի եւ կատակասեր երիտասարդ: Նրա կերտած կերպարներն այնքան բնական եւ հոգեհարազատ են թվում, որ հաճախ մոռանում ենք արտիստի այլազգի լինելը:

Սոլուիտացի աղքատ գեղջուկների որդին արդեն վաղուց գերասեղ է եւ «Չելենտանո գերդասանի» կնիքհոր կարգավիճակով բնակվում է Միլանից ոչ հեռու գտնվող սեփական էթեղ առանձնատանը, իր հավատարիմ կնոջ՝ Կլաուդիա Մորիի, զավակների ու թոռների հետ:

Ադրիանո Չելենտանոյի անձը դժվար է միանշանակ բնութագրել: Նրա մեջ ներդաշնակորեն զուգորդվում են մի շարք հակասություններ: Դպրոցում ընդամենը հինգ տարի սովորած արվեստագետը համառ աշխատանքի եւ բնատուր տաղանդի շնորհիվ հիրացել է համաշխարհային փառքի: Լինելով ազատասեր՝ նա ենթակայա է, եթե ստիպեն մեկընդմիշտ «սանձահարել» է Իտալիայի գեղեցկագույն կնոջը (Ադրիանոն եւ Կլաուդիան միասին են արդեն 40 տարի: Հանուն այդ միության հանրահայտ կինոդերասանուհի Մորին դարձավ ենային ընտանիքի): «Բինգո-Բոնգո» եւ «Կամակոր տղամարդու սանձահարումը» ֆիլմերում Չելենտանոյի խաղացած դերերը կարելի է բնութագրել որպես դարվինիզմի յուրօրինակ դրսեւորումներ: Մեր հանդիսականին լավ ծանոթ է նաեւ «Բլեֆ» ֆիլմը, որտեղ Չելենտանոյի խաղընկերն է նշանավոր դերասան Էնքրնի Քուինը: Նա ներկայանում է որպես կոմիս եւ միաժամանակ ճարտարական կերպար: Չելենտանոն խուսափում է աղմկոտ հասարակությունից եւ մամուլից: Նրանց երբեմն անվանում են բարեպաշտ հերետիկոս: Արվեստագետը տարբեր առիթներով ճննդաստել է վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիին, Միլանի ֆաղաքապետին եւ առհասարակ հանդես է եկել սոցիալ-քաղաքական բազմաթիվ աղմկալի հայտարարություններով: Ոմանք նրան համարում են անզուգական կատակերգու, ուրիշները՝ տարօրինակ երգիչ: Մի խոսքով, Չելենտանոն անկրկնելի է եւ անմրնելի:

«Ադրիանոն առեղծվածային, շատ առանձնահատուկ մարդ է: Նա առանձնատես չի ուզում որեւէ տեղ մեկնել եւ առհասարակ իրեն համարում է ավելի շուտ արտիստ, քան երաժիշտ», մի առիթով մոսկովյան «Իզվեստիա» թերթի թղթակցին ասել է Չելենտանոյի հին ընկեր, երգիչ եւ կոմպոզիտոր Տոտո Կուտունյոն:

Սան Ռեմոյի փառատոնի եւ երգի մի շարք այլ փառատոնների դափնեկիր Ադրիանո Չելենտանոն արդեն 1960-ականներին եւտարդայի աստղ էր: Չորս տասնամյակ առաջ նա էլ-երից մեկն էր, որ հիմնեց ծայնագրման սեփական ստուդիա (Clan Celentano), որն այսօր դարձել է բազմամոտակա կառույց: Որպես երգիչ նա ծայնագրել է հինգ տասնյակ ալբոմներ (վերջինը թողարկվեց բառացիորեն մեկ ամիս առաջ): Եվ այսօրից հետո նա երբեմն փիլիսոփայորեն կասկածներ է արտահայտում, թե երաժիշտ է արդյոք ինքը:

Ինչ վերաբերում է նրա դերասանական կարիերային, Չելենտանոն փաստորեն միաձուլվել է իր կերտած կերպարներին: Նա մեկն է այն սակավաթիվ դերասաններից, որոնք կարողանում են տեղային գեղեցիկներին հաղորդել համամարդկային եւ կենդանի հնչողություն:

Պատրաստեց Պ. ԲԵՐԵՆՅԱՆԸ

Լեւոն Արոնյանը գերազանց է մեկնարկել

Հոլանդական Վեյֆ ան Ջեե խաղում մեկնարկել է ընթացիկ մրցաշրջանի առաջին խոշոր մրցաշարը, որը ՖԻՖԱ-ի 20-րդ կարգի է: Մրցաշարում գերազանց է մեկնարկել նախորդ տարվա հաղթողներից մեկը՝ Լեւոն Արոնյանը՝ տոնելով երկու անընդմեջ հաղթանակ: Վիճակահանությամբ Արոնյանին բաժին է ընկել 6-րդ համարը: Առաջին տուրում հայ գրոսմայստերի մրցակիցը աշխարհի նախկին չեմպիոն, բուլգարացի Վեսելին Թոփալովն էր: Երկրորդ տուրում Արոնյանի մրցակիցը Իսրայելը ներկայացնող Բորիս Գելֆանդն էր: Այս անգամ Լեւոնը հաստակ խաղաց ողջ պարտիայի ընթացքում եւ հասավ ցանկալի արդյունքի՝ տոնելով 2-րդ անընդմեջ հաղթանակը: Երրորդ տուրում Արոնյանը սպիտակներով մրցում էր Պետեր Լեկոյի հետ: 28-րդ քայլում մրցակիցները խաղաղ դաշն կնքեցին: Հետաքրքրական է, որ երրորդ տուրի բոլոր վեց պարտիաներն էլ ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին նաեւ Ռաջաբովն ու վան Վելին, Մամեդյարովն ու Կոամնիկը, Էլյանովն ու Անանդը, Ադամսն ու Կառլսենը, Իվանչուկն ու Գելֆանդը, Պոլգարն ու Թոփալովը:

Որոշ չափով անսպասելի էր աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի անհաջող մեկնարկը: Առաջին տուրում նա պարտվեց աղյբեջանցի Թեյմուր Ռաջաբովին, երկրորդում ոչ-ոքի խաղաց նախորդ մրցակցի հայրենակցի՝ Շահրիյար Մամեդյարովի հետ: Դասակարգման ցուցակը գլխավորող Վլադիմիր Կրամնիկը ոչ-ոքի ավարտեց հանդիպումները Լյուկ վան Վելիի եւ Թեյմուր Ռաջաբովի հետ պարտիաներում:

Հաջող է մեկնարկել նորվեգացի 16-ամյա գրոսմայստեր Մագնուս Կառլսենը, որը եւս մեկնարկում երկու հաղթանակ է տոնել՝ առավելության հասնելով Մամեդյարովի ու Պավել Էլյանովի նկատմամբ: Հենց Կառլսենն էլ Արոնյանի հետ 2,5 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Ոչ-ոքի ավարտ ունեցան Էլյանով-Լեկո, Ադամս-Գելֆանդ, Իվանչուկ-Պոլգար, վան Վելի-Պոլգար, Թոփալով-Իվանչուկ, Լեկո-Ադամս պարտիաները: Առաջատարներից կես միավորով հետ է մնում Ռաջաբովը: 1,5-ական միավոր ունեն Կրամնիկը, Ադամսը, Իվանչուկը, Պոլգարը, Լեկոն եւ վան Վելին:

«Բ» խմբի մրցաշարում հանդես են գալիս Գաբրիել Սարգսյանն ու Սերգեյ Մովսիսյանը: Վիճակահանության հմահաճույով նրանք հանդիպեցին առաջին տուրում: Գրանցվեց ոչ-ոքի: Երկրորդ տուրում էլ հայ շախմատիստները հաշտություն կնքեցին. Սարգսյանը՝ Սմիթսի, Մովսիսյանը՝ Չեռյարինովի հետ: Երրորդ տուրում Մովսիսյանը մրցաշարում առաջին հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Միխալ Կրասենկովի նկատմամբ: Իսկ ահա Սարգսյանը պարտություն կրեց Նեմոդնյաշչուց: Երեք տուրից հետո Մովսիսյանը վաստակել է 2 միավոր, Սարգսյանն ունի 1 միավոր:

16-րդ քայլին սպիտակներով խաղացող Արոնյանը շահեց մրցակցի գինվորը եւ հայտնվեց դժվարին կացության մեջ, երբ Թոփալովի ձին շախ հայտարարեց: Թվում էր, թե Արոնյանին հարկ կլինի ծանր պայքար մղել դիրքը հավասարեցնելու եւ ոչ-ոքի արդյունքի հասնելու համար: Սակայն Թոփալովը գտնվելով ցայտնոտում, սկսեց սխալներ թույլ տալ եւ արդյունքում պարտվեց:

Պարտիայից հետո Լեւոն Արոնյանը «Սպորտ-էքսպրեսի» թղթակցին հետեւյալն է ասել. «Հաշվի չէի առել, որ մրցակցի ձին սպառնում է շախով, իսկ երբ նավակս կորցրի, վիճակս վատթարացավ: Ինձ օգնեց մրցակցի ցայտնոտը: Թոփալովը սկսեց սխալվել ու վատթարացրեց դիրքը, իսկ իմ դիրքը լավացավ: Վերջնախաղում էլ ոչ-ոքի դիրքում Թոփալովը ձիcs չխաղաց, ինչը նրա պարտության պատճառ դարձավ: Ինչ վերաբերում է ինձ, ապա այսօր շատ անհաղթ խաղացի, պարզապես բախտս բերեց: Կաբխատեմ հետագայում հույսս չդնել բախտի վրա»:

Դասակարգման ցուցակը գլխավորող Վլադիմիր Կրամնիկը ոչ-ոքի ավարտեց հանդիպումները Լյուկ վան Վելիի եւ Թեյմուր Ռաջաբովի հետ պարտիաներում:

Հաջող է մեկնարկել նորվեգացի 16-ամյա գրոսմայստեր Մագնուս Կառլսենը, որը եւս մեկնարկում երկու հաղթանակ է տոնել՝ առավելության հասնելով Մամեդյարովի ու Պավել Էլյանովի նկատմամբ: Հենց Կառլսենն էլ Արոնյանի հետ 2,5 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Ոչ-ոքի ավարտ ունեցան Էլյանով-Լեկո, Ադամս-Գելֆանդ, Իվանչուկ-Պոլգար, վան Վելի-Պոլգար, Թոփալով-Իվանչուկ, Լեկո-Ադամս պարտիաները: Առաջատարներից կես միավորով հետ է մնում Ռաջաբովը: 1,5-ական միավոր ունեն Կրամնիկը, Ադամսը, Իվանչուկը, Պոլգարը, Լեկոն եւ վան Վելին:

«Բ» խմբի մրցաշարում հանդես են գալիս Գաբրիել Սարգսյանն ու Սերգեյ Մովսիսյանը: Վիճակահանության հմահաճույով նրանք հանդիպեցին առաջին տուրում: Գրանցվեց ոչ-ոքի: Երկրորդ տուրում էլ հայ շախմատիստները հաշտություն կնքեցին. Սարգսյանը՝ Սմիթսի, Մովսիսյանը՝ Չեռյարինովի հետ: Երրորդ տուրում Մովսիսյանը մրցաշարում առաջին հաղթանակը տոնեց՝ առավելության հասնելով Միխալ Կրասենկովի նկատմամբ: Իսկ ահա Սարգսյանը պարտություն կրեց Նեմոդնյաշչուց: Երեք տուրից հետո Մովսիսյանը վաստակել է 2 միավոր, Սարգսյանն ունի 1 միավոր:

Միխայլիշենկոն գլխավորեց Ուկրաինայի հավաքականը

Ալեխսել Միխայլիշենկոն նշանակվել է Ուկրաինայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: Այդ պաշտոնում նա կփոխարինի վերջերս հրաժարական տված եւ «Մոսկվայի» ղեկը ստանձնած Օլեգ Բլոխինին: 44-ամյա մասնագետն Ուկրաինայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ պայմանագիր է կնքել 2+2 տարբերակով: Մինչ այդ Միխայլիշենկոն 2004-ից երկրի երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչն էր, որի գլխավորությամբ ուկրաինացի ֆուտբոլիստները 2006-ի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում հասան ամենամեծ հաջողությանը՝ դառնալով արծաթե մրցանակակիր: Այդ հաջողության համար Միխայլիշենկոյին շնորհվեց Ուկրաինայի վաստակավոր մարզչի կոչում:

Միխայլիշենկոն խորհրդային անվանի ֆուտբոլիստներից էր, երկար տարիներ հաջողությամբ հանդես է եկել Կիեւի «Դինամոյում», իտալական «Սամպդորիայում» եւ շոտլանդական «Գլազգո Ռեյնջերսում»: Նա Գավաթակիրների գավաթակիր է, ԽՍՀՄ եռակի (1985, 1986, 1990-ին), Իտալիայի (1991-ին) եւ Շոտլանդիայի (1992-96-ին) չեմպիոն է: 1988-ին ճանաչվել է ԽՍՀՄ լավագույն ֆուտբոլիստ: ԽՍՀՄ հավաքականի կազմում Միխայլիշենկոն արժանացել է 1988-ի օլիմպիական խաղերի չեմպիոնի եւ Եվրոպայի փոխչեմպիոնի տիտղոսներին:

Մարզչական կարիերան Միխայլիշենկոն սկսել է 1997-ին: Մինչեւ 2002-ը նա Կիեւի «Դինամոյում» Վալերի Լոբանովսկու օգնականն էր, իսկ վերջինիս մահից հետո գլխավորեցրեց նրա պաշտոնը: Նրա գլխավորությամբ դինամոյակ՝ անները դարձել են Ուկրաինայի կրկնակի չեմպիոններ, երկրի գավաթակիր ու սուպերգավաթակիր:

Զեբելյանը տրանսֆերի է հանվել

Մերձմոսկովյան «Խիմկի» ակումբի ղեկավարությունը տրանսֆերի է հանել ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի հարձակվող Ռոբերտ Զեբելյանին: Վերջինս «Խիմկի» էր տեղափոխվել անցած տարվա հունիսին «Կուբանից»: Բացառված չէ, որ 24-ամյա ֆուտբոլիստը կրկին վերադառնա «Կուբան»: Վերջինիս ղեկը ստանձնել է Ալեխանդր Թարխանովը: «Կուբանը» հանդես է գալիս Ռուսաստանի առաջին խմբի առաջնությունում:

Բերբատովը կրկին լավագույնն է

Անգլիական «Տոտենհեմ» հարձակվող Դիմիտար Բերբատովը կրկին լավագույնն է ճանաչվել Բուլգարիայում: Մարզական լրագրողների հարցման արդյունքներով Բերբատովը վաստակեց 327 միավոր՝ առաջ անցնելով Մարտին Պետրովից («Մանչեսթր Սիթի») եւ Գեորգի Պետկովից («Լեւսկի»):

«Բանանցը» համալրում է կազմը

Սանկտ Պետերբուրգում կայանալիք «Համագործակցության գավաթի» խաղարկությանը նախապատրաստվող Երեւանի «Բանանցը» մրցաշարից առաջ համալրում է կազմը: Թիմ են հրավիրվել վրացի դարպասապահ Գեորգի Նիկուրաձեն, բուլգարացի կիսապաշտպան Մարկո Մարկովը, «Փյունիկի» նախկին ֆուտբոլիստ Խորեն Վեռանյանը, ինչպես նաեւ գյումրեցի Կարեն Ալեխանյանը: Վերջինս վերջին երեք տարիներին հանդես էր գալիս Քիշինեւի «Զիմբրու

Նախագահի բոլոր թեկնածուներին դիմում են դահանջելու դեմ

Հայաստանի շրջակա միջավայրի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների էկոլոգիական դաշինքը ուղերձ է հղել 2008 թվականի նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուներին՝ խորին մտահոգություն հայտնելով երկրի բնական ռեսուրսների շահագործման ընթացքի, մասնավորապես՝ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության ու Թեղուտի անտառաստարածքի որպես դրենաժոլիբդենային հանքավայր շահագործելու վերաբերյալ: Դաշինքը նշում է, որ Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարությամբ եւ դրենաժոլիբդենային հանքավայրի շահագործմամբ խախտվում են Ազգային ժողովի ընդունած մի շարք օրենքներ, ինչպես նաեւ միջազգային կոնվենցիաներ՝ ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին, անտառաստանի դեմ պայքարի, եվրոպական սնտեսական հանձնաժողովի անդրսահմանային համաձեռնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության մասին, ինչպես նաեւ Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիաները:

«Համոզված են, որ Թեղուտի հանքի շահագործումը հանցագործություն է բնության հանդեպ, հանի դեռ միջազգային ու տեղական կազմակերպությունները չեն իրականացրել անկախ ու բազմակողմանի փորձագիտական հետազոտություններ ու չեն ներկայացրել բնությանը հասցվող վնասների իրական պատկերը՝ բոլոր տեսակներից տրված իրական գնահատականներով: Միայն դրանից հետո կարելի է կայացնել հիմնավորված որոշում՝ հավատարիմ մնալով ՀՀ սահմանադրությանը, ՀՀ բնապահպանական օրենսդրությանն ու միջազգային պարտավորություններին», գրում է դաշինքը:

Ուսումնասիրելով լեռնամետալուրգիայի ինստիտուտի մշակած գնահատման եւ աշխատանքային նախագծերը, փորձագետները եկել են եզրահանգման, որ դրանցում բացակայում է անկողմնակալությունը, կան սխալներ, հավակները կատարել են ձեռնարկողին ձեռնտու մոտեցումներով, օգտագործվել են գների երկակի սանդղակներ՝ վնասները փոքր, իսկ օգուտները շատ ցույց տալու համար, չեն ներկայացվել ձեռնարկողի տեսանկյունից ոչ շահավետ այլընտրանքներ, բացակայում է միջազգային փորձի ներկայացումն ու համեմատական վերլուծությունը, չեն ներկայացվել շրջակա դեմ առահայտված կարծիքները: Իսկ ՀՀ բնապահպանության նախարարության դրական եզրակացությունը ոչ մի փորձագիտական հիմք չունի, այն պարզապես էյ-Սի-Փի ձեռնարկության ընդամենը մասնավոր ու միակողմանի շահավետ գործունեությանը ընթացք տվող եւ ՀՀ բոլոր օրենքներն ու միջազգային համաձայնագրերն անտեսող դրսեւորում է:

Դաշինքը ՀՀ կառավարությանն առաջարկում է վերանայել հանքարդյունաբերության վերաբերյալ պետական քաղաքականությունը եւ ոչ միայն հետաձգել Թեղուտի հանքավայրի շահագործումը, այլեւ առավելագույնս կրճատել Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրից արդյունահանման ծավալները: Առաջնքաց տեմպերով ձեռնամուխ լինել Հայաստանում պղնձի ու մոլիբդենի առավել խոր մշակման ու դրանցից տարբեր արդյունաբերական արտադրանքների ստացման տեխնոլոգիաների ներդրման աշխատանքներին, ինչը կնպաստի ՀՀ տնտեսության իրական զարգացմանը, մրցունակության բարձրացմանը, արտահանման ծավալների աճին, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, կառավարման նոր մշակույթի ձեւավորմանը, ներդրումների խթանմանը եւ այլն: «Կոչ ենք անում չկրկնել թույլ զարգացած, հանր արդյունահանող եւ իրենց պետականությունը վտանգած երկրների ճակատագիրը ու չվտանգել մեր երկրի ապագան»:

Ռ. Պ.

Նոր եռալեզու բառարան՝ հասարակության լայն շրջանակների համար

Վերջին տարիներին խաղաղագիտության, միջազգային հարաբերությունների եւ իրավագիտության հանդեպ հետաքրքրությունը հանգեցրել է նոր հասկացությունների, տերմինների եւ կազմակերպությունների անվանումների հայավումների ներմուծմանը լեզվի մեջ: Ընթերցողի դատին է հանձնվել անգլերեն-հայերեն-ռուսերեն հայավումների համառոտ բառարան, որի շնորհանդեսը կայացավ երեկ ԵՊՀ գրադարանի դահլիճում: Բառարանը հնարավորություն է տալիս խաղաղագետին, միջազգայնագետին, իրավագետին, լրագրողին եւ այլ ոլորտի անգլերեն ուսումնասիրողին օգտվելու մեկ աղբյուրից՝ չանդադարձնելով այլ մասնագիտական աղբյուրների: Բառարանը հնարակվել եւ հրատարակվել է տպագրության ԵՊՀ-ի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Իրինա Բուռնազյանը, որը ԵՊՀ-ի ռոմանագերմանական բանասիրության թիվ երկու ամբիոնի դասախոսներից է, ինչպես նաեւ բառարանի հեղինակներից մեկը, ասաց. «Բառարանի վրա աշխատանք է տարվել շուրջ երեք տարի. հեղինակները հինգն են: Կարեւոր, կիրառելի բառարան է դասավանդման եւ ուսանողների համար: Հատկապես բարդ մասնիկների համար որակյալ բառարան է. պարունակում է 1400 հասկացություն, մոտ 250 միջազգային կազմակերպությունների անուններ, 230 աշխարհագրական անվանում: Բառարանի կարիքը զգացվել է դասավանդման, տեխստեր ու թերթեր կարդալու ընթացքում, երբ պետք էր միջազգային տերմիններին վերաբերող անգլերեն բառերի հայերեն թարգմանությունը: Տպագրվել է ՀՀ սորոսի եւ երիտասարդության հարցերի նախարարության ֆինանսավորմամբ, լույս է տեսել 500 օրինակով: Մասնագիտական բառարանը առաջին անգամ է հրատարակվում Հայաստանում եւ պարունակում է տվյալ մասնագիտական ոլորտներում ամենագործածական հայավումները»:

Շնորհանդեսին ներկա ՀՀ սորոսի եւ երիտասարդության փոխնախարար Արթուր Պողոսյանն իր հերթին հավելեց. «Բառարանը գտնելու է իր ուրույն տեղը ուսանողների, դասախոսների, լրագրողների շրջանակում: Նմանատիպ միջոցառումների ֆինանսավորումը մեր նախարարության կողմից է եւ համարվում է առաջնահերթ, քանի որ մենք ունենք ուսանողների գիտական աշխատությունների, հայրենասիրական դաստիարակություն ապահովող ձեռնարկներ եւ սա մեր աշխատանքներից մեկն է, որ ներկայացնում ենք ձեր դատին: Հույս եմ հայտնում, որ ենթարկելով այս ամենը՝ կվերահրատարակեմք բառարանը եւ կներկայացնենք լայն հասարակությանը»:

«Այս աշխատության մասին իմ ասելիքները միայն են. որպես մշակութային երեւույթ, ուզում եմ կարեւորել: Մխիթարյանների եւ Հայկազյանների բառարանների ստեղծման օրվանից մինչ այսօր, աշխարհում բառարանաստեղծ ժողովուրդ դժվար թե լինի: Բնականորեն յուրացնելով համաշխարհային արժեքները՝ տեղայնացվում է հիմնականում բառարաններով, թարգմանություններով: Ոչ միայն եվրոպական, արեւմտյան տարածված հայավումները, այլ նաեւ հայերեն հայավումների բառարաններն էլ են անհրաժեշտ, որովհետեւ դրանք յուրատեսակ ծանկագրեր ու հայավումներ են: Սա ազգային արժեք է եւ նման աշխատությունները պետք է խրախուսվեն: Սա բոլորիս համար սեղանի գիրք է, քանի որ պրոֆեսիոնալ հաղաղագետները կարող են շատ տերմինների, հայավումների թարգմանություններ չիմանալով՝ օգտվել այս բառարանից», ասաց է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հաղաղագիտության ամբիոնի վարիչ Հենրիխ Մանուկյանը:

ՆԱՐԻՊ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ընդ գազից թունավորվեց 8 հաղաքացի

Հունվարի 19-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գազի թունավորումով իրենց մոտ են տեղափոխվել Երեւանի Միհայելյան փող. թիվ 28 տան բնակիչներ Ռոզա Վարդանյանը, Սվետլանա Շիրմազանյանը եւ Կարեն ու Գոռ Պետրոսյանները:

Ոստիկանության Կոտայքի բաժնում հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գազից թունավորումով իրենց մոտ են տեղափոխվել Գուրգեն, Լալա, Սարգիս եւ Լիլիթ Կառավարիչյանները: Պարզվել է, որ երկու դեպքում էլ թունավորվել են տանը՝ գազի վառարանի թերությունն հետեւանքով առաջացած ածխաջրածնի գազից: Կասկածվում է նախամտություն:

Մ. Մ.

Հանդիպում բանկերի ղեկավարների հետ

Հունվարի 14-ին տեղի ունեցավ ԿԲ խորհրդի ավանդական հանդիպումն առեւտրային բանկերի ղեկավարների հետ: Հանդիպման ժամանակ ամփոփվեցին 2007թ. յուրաքանչյուր եռամսյակի տնտեսական ցուցանիշները եւ ներկայացվեցին 2008 թ. առաջին եռամսյակի ծրագրային ուղղությունները (տես՝ «Դրամավարկային քաղաքականության ծրագիր. 2008թ. I եռամսյակ», որը տեղադրված է ԿԵՏՐՈՆական բանկի ինտերնետային էջում (www.cba.am)):

ԿԲ մամուլի ծառայություն

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երեւանը դարձյալ սպասում է նոր ավտոբուսների

6-7 նոր ավտոբուսային երթուղիները կփոխարինեն 10 միկրոավտոբուսային երթուղիներին

70 նոր ավտոբուսներ շուտով կներկվեն Հայաստան, որոնք կհամալրեն Երեւանի հասարակական տրանսպորտի շարժակազմը: Ընդ որում, դրանցից 32-ը արդեն հասել են Հայաստան, իսկ մնացածը գտնվում են Իլյիչովսկի նավահանգստում: Երեկ այս մասին Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ասաց «Երեւանտրանս» ընկերության տնօրեն **Կարեն Եդիգարյանը**: Նա հայտնեց, որ մինչեւ նոր տարի Երեւանի երթուղային ցանցը համալրվել էր երկու նոր ավտոբուսային երթուղիներով՝ թ. 24 եւ թ. 36: Առաջիկա մեկ-երկու ամսում վերոնշյալ նոր ավտոբուսները տեղ հասնելուց հետո մայրաքաղաքում կավելանան եւս 6-7 ավտոբուսային երթուղիներ: Դրանք կփոխարինեն միկրոավտոբուսային երթուղիներին, որոնցից մոտ 10 փաստորեն կդադարեն գործելուց:

Կարեն Եդիգարյանը հայտնեց, որ պայքար է տարվում զանազան խախտումների դեմ, մասնավորապես վարորդների՝ միկրոավտոբուսներում եւ ավտոբուսներում ծխելու դեմ: 100-ից ավելի դասական հայցեր են ներկայացվել այդ առնչությամբ տեղի ունեցած իրավախախտումների կապակցությամբ: «Երեւանտրանսի» տնօրենը կոչ արեց բնակիչներին նման դեպքերի, ինչպես նաեւ այլ դժգոհություններ ունենալու դեպքում դիմել քաղաքապետարան եւ իր դեկավարած կազմակերպությանը, վստահեցնելով, որ խախտում թույլ տված անձն անմիջապես համապատասխան պատիժ կկրի:

«Ազգի» հարցին, թե որքան ավտոբուս պետք է լինի ավտոբուսային երթուղով, որպեսզի ավտոբուսների երթուղի դուրս գալու հաճախականությունն ավելի արագ լինի, հանի որ ներկայումս ավտոբուսները երթուղի են դուրս գալիս յուրաքանչյուր 20 րոպեն մեկ, Կարեն Եդիգարյանը պատասխանեց, որ նման հաճախականություն իսկապես չպետք է լինի: Այն կրճատելու եւ 10-12 րոպեի հասցնելու համար յուրաքանչյուր երթուղում պետք է գործեն 12-14 ավտոբուս: Նման խնդիր է դրված այն տնտեսվող հողերի առջեւ, որոնք շահագործում են 10 ավտոբուսով համալրված ավտոբուսային երթուղիները:

Կանգառները մեքենաներից ազատելու հարցի առնչությամբ նշվեց, որ այդ հարցը հաճախ է քննարկվում Երեւանի քաղաքապետարանի եւ ճանապարհային ոստիկանության կողմից: «Երեւանտրանսի» տնօրենը հույս հայտնեց, որ այս տարվա առաջին եռամսյակում Հայաստան կբերվեն էվակուատորներ, որոնք կանգառներում կայանած ավտոմեքենաները կտեղափոխեն տուգանային հրապարակ:

ԱԲՈՒ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ԱԲԱՊՁԲ-08/1» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Երեւանի ճարտարապետության եւ շինարարության պետական համալսարանի աշխատակազմի կարիքների համար ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Արդշինինվեստբանկ» «Բեգալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Կ. Դանիելյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 14.10-ն:

Մրցույթի հրավեր - 009/08

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ **«Մեղրի քաղաքի սուրբ Սարգիս եկեղեցու վերականգնման աշխատանքներ»:**

Տանկագողները կարող են ծանոթ բերել մրցույթին մասնակցելու անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, այցելելով ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ՝ Պետրոս Աղամյան 14, դիմել Գրիգոր Սինոյանին՝ 56 60 73 (ք. 126: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2008, 30 հունվարի, ժամը 17:00:

UNDP

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

[illegible]

2008 թ. հունվարի 17-ին, ժամը 12.00-ին Արաբաս քաղաքի Արաղածոտնի Հանգույց 8 հասցեում կազմակերպվում են հասարակական լսումներ **«ԷԼՄԻ Զ. Ի.» ՍՊԸ** կառուցապատվածի մասնագիտների արտադրության նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ:

Տեղեկությունների համար զանգահարել 262594 կամ 093 668972

Կորել է

«Արդահան» ՍՊԸ-ի պետ. ռեգիստրի վկայականը, գրանցման համարը՝ 28211002792, տրված 17.10.1997 թ.

Համարել անվավեր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի հունվարի 12-ին հրատարակվել է ՀՀ ֆինանսների եւ էներգետիկայի նախարարության պաշտոնական տեղեկագրի N 2 (111) համարը, որում հրապարակվել են.

* թվով 54 հատ բաց մրցույթի մասին հայտարարություններ
* թվով 18 հատ կնքված գնման պայմանագրերի մասին հայտարարություններ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

www.azg.am

ՏՈՂԱՅԻՆ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՐԵԼ՝ 58-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Հակոբ Անթիբեան: Տպաքանակ՝ 3000, սառնագրված է տպագրության՝ 14.01.2008, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: